

ԱՐՄԱԿԻՐԻ «ԱՐԱՐԱՏ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՑՈՒԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Համառոր ուսումնական ձեռնարկի)

Գլուխացնելու առթիվ կամուրջը և գլուխացնելու սպասարկությունը՝ նշանակած է հայության ազգային և համաշխատ առաջնահարցը:

ԱՐՄԱԿԻՐԻ
ՊԱՐԳԵՎ ՈՍԿԱՆՅԱՆ
2007

8-6-500-0500-30 ԽԲՏ

Գիրքը հրապարակված է «ԱՐՄԱՐԱՏ»
համալրաբանի միջոցներով

Հրատարակվում է «Արարատ» համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոսներ՝ մ.գ.թ. դոցենտ Ե. Գրիգորյան
մ.գ.թ. դոցենտ՝ Ա. Սարգսյան
Խմբագիր՝ Ռ. Ակրտչյան

Սիմոնյան Ցոլակ

Ս - 504 Մանկավարժության պատմություն: Ուս. ձեռնարկ.- Արմավիր:
Պարգև Ոսկանյան, 2007.- 98 էջ:

Մանկավարժության պատմության բուհական դասընթացը
ներառում է արտասահմանյան և հայ դպրոցի ու մանկավարժա-
կան մտքի պատմությունը: Քանզի մեր ժողովրդի դպրոցի և ման-
կավարժական մտքի պատմությունը տրված է առանձին գրքե-
րով, ապա այստեղ, չխախտելով առարկայի որոշակի ամբողջա-
կանությունը, տրված է միայն արտասահմանյան մանկավարժու-
թյան պատմության ծրագրային թեմաների, հաճախ որպես ուղե-
ցույց, խիստ համառոտ շարադրանքը արժարժվում են առանց-
քային դրույթները, մեկնարանումները, դպրոցի ու մանկավար-
ժության բնագավառի գործիքների հայցքները:

Ս 4302000000 2007թ
0056(01)2007

ԳՄԴ 74.04 ց7

ISBN 978-99930-962-3-8

© Սիմոնյան Ց., 2007թ.

© Պարգև Ոսկանյան, 2007թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Առարկան. Մանկավարժության պատմությունը գիտություն է, դաս-
տիարակության, դպրոցի, մանկավարժական մտքի ծագման, ծևավոր-
ման, պատմական զարգացման օրենքների, օրինաչափությունների
մասին. այսինքն, Երբ, որտեղ, ինչպես են ծագել, ծևավորվել, զարգա-
ցել դաստիարակությունը, դպրոցը, մանկավարժական միտքը, ինչ բո-
վանդակություն, դրսնորումներ են ունեցել, ինչպես են նպաստել մարդ-
կության գոյատևմանն ու զարգացմանը:

Մանկավարժության պատմությունը մանկավարժական գիտու-
թյունների համակարգի անբաժանելի մասն է. առանց առարկայի իմա-
ցության չկա խկական գիտություն։ Երբ ուսումնաշիրողը դիմում է իր
մասնագիտության պատմությանը, նոր միայն նա մուտք է գործում իս-
կական գիտության բնագավառը. հանրահայտ է, որ «պատմությունն
առանց տեսության կույր է, միաժամանակ տեսությունն առանց պատ-
մության սին» /Ի. Կանոն/, այլ կերպ՝ առանց պատմության չկա տեսու-
թյուն, առանց տեսության չկա կյանք:

Մանկավարժության պատմությունը /մանկավարժական գիտու-
թյունների ողջ համակարգը/ սերտորեն կապված է այլ գիտությունների
փիլիսոփայության, հոգեբանության, ընդհանուր պատմության, գրա-
կանության, տրամաբանության /և այլ ու այլ/ ... և էլ ավելի սերտորեն
կյանքի հետ:

Աղբյուրները, մեթոդները, որպես պատմական առարկա օգտվում է
պատմության ուսումնաշիրման համար ընդունված նույն աղբյուրնե-
րից:

Նյութական մշակույթի հուշարձաններ,
Արխիվային նյութեր, փաստեր...
Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, պլան-ծրագիր, կանո-
նադրություն,
Գործիչ - մանկավարժների կյանքն ու գործը,
Սանուլ, հատկապես մանակավարժական,
Բազմաբնույթ գրականություն, պատմական, գեղարվեստական,

¹ Թե ինչ մկատառումներով. Որոշ երկրներում /Ֆրանսիա, ճապոնիա/ մանկավարժու-
թյան պատմությունը գրեթե անտեսված է, կամ չկա կամ կցկուր տեղեկություններ են
հայորդում. այլ տեղ կրծառում են ժամերը՝ իր ներառելով տեսության դասընթացի
մեջ. վերջին մոտենումը վերապահումով, ներեկի է, եթե չխարարվի թեմատիկ ամբող-
ջականությունը:

ճանապարհորդական, մեմուարային, հնագիտական և այլն:

Այս ամենն ուսումնասիրելիս օգտագործում են գանազան մեթոդներ, դիտում, գրուց, անկետա-հարցաքերթիկ, բազմաբույթ գրականություն, մամուլի և այլ նյութերի հետազոտում-ուսումնասիրում... և ամեն ինչ ընկալելով համեմատության, վերլուծութուն, համադրություն, ընդանրացման և , երեմն իսկ, վերացարկման տեսանկյունով, անկասկած դեկավարվելով պատմա-քննադատական մոտեցումներով:

Դաստիարակության ժագումը: Դաստիարակությունը որպես հասարակական - սոցիալական երևոյթ կապված է մարդ-արարածի, մարդկային հասարակության ծագման-ձևավորման հետ և յուրահատուկ է միայն մարդուն - մարդկությանը, որից դուրս /կենդանական աշխարհ/ այն բացակայում է. այնտեղ իշխում է բնությունը, բնագդը, վարժեցումը:

Դաստիարակության ծագման տարբեր տեսակետ-տեսություններ կան, անդրադանանք երեքին.

- **գիտական տեսություն.** Մարդը կենդանական աշխարհից տարբերվում է երկու, միայն մարդուն յուրահատուկ, որոշիչ որակներով, դրանք են՝ աշխատանքը և հոդաբաշխ լեզուն. ահա այդ կողմերով է նա առանձնանում շրջապատի ողջ կենդանական աշխարհից: Այդ գործընթացի սկզբից /ոչ թե ժամեր կամ օրեր , այլ երկարատև ժամանակամիջոց/, երբ նա ընդունեց ուղղահայաց դիրք, փայտն ու քարը հարմարեցեց իր բարին /արդեն այն դարձավ ծեռք/ այն դարձեց գործիք, օրվա և հետագա գործունեության համար և արտաքերեց առաջին հոդաբաշխ բառ-խոսքը, մարդը վեր կանգնեց կենդանական աշխարհից: Դաստիարակությունն էլ այսպես, այս ընթացքում, երբ մեկն իր փորձն է հաղորդում մյուսին և նրանից փոխառում այն, այսպես էլ ծագել ու ձևավորվել է դաստիարակությունը: /Ենգելս. «Աշխատանքի դերը կապիկի մարդացման պրոցեսում», «Ընտամիջի մասնավոր սեփականության և պետության ծագումը»:

- **կենսարանական տեսություն.** Դաստիարակությունը որպես փորձի կենսած արկա է և կենդանական աշխարհում. ավագը /իիմնականում մայրը/ դաստիարակում է կրտսերին /ձագին/. սովորեցնում է այն ինչ պետք է գոյապահպանման և զարգացման համար: Արտաքնապես դժվար է առարկել. բայց պետք չէ անտեսել գոյատևման, գոյյապահպանման երեք գերկարելոր բնագրները-սերնդի շարունակություն, կերահայրայրման և ինքնապաշտպանության... կենդանական աշխարհը դեկավարվում է այդ բնագդներով: Իհարկե, մարդու մոտ էլ կան և գործում են այդ բնագդները, բայց դրանք ենթակա են

և դեկավարվում են գիտակցությամբ: Կենդանական աշխարհի համար, կարծում ենք, այդ ամենը կարելի է ծևակերպել որպես բնագդային վարժեցում, բայց ոչ դաստիարակություն: /Շ.Լեբուրն - ֆր. «Դաստիարակության էվոլուցիան», Ա.Էովինաս - ֆր. «Կենդանիների սոցիալական կյանքը» /1877 թ./:

- **Հոգեբանական տեսություն.** Եւրիունն է անիմաստ ընդորինակումը /ընդորինակման բնազդ/: Գ. Տառդ- ֆր. «Սոցիալական տրամաբանություն» / 1895/, «Սոցիալական օրենքներ » /1898/, Մոնրո- Ամն. «Մանկավարժության պատմություն»:

Անկասկած լրիվ բացառել այս երկու տեսությունները, անիմաստ է: Ընդունելով շրջանառության մեջ ընդունված գիտական տեսության անառարկելությունը, միաժամանակ մերժել, ժխտել մարդու էվոլուցիոն զարգացման կարևորությունը, ինչպես և ընդորինակման դերն ու տեղը դաստիարակության ծագման, ձևավորման, զարգացման հարցում ընդունելի չեն:

ՅԻՆ ԱՐԵՎԵԼՔ.

ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԴՐՈՌՅԸ

Յին Արևելք... Շումեր, Աքքաղիա, Եգիպտոս, Բարելոն, Չինաստան, Հնդկաստան, Ասորեստան, ինչու ոչ, նաև Պարսկաստան, Յայաստան... այն տարածքներն են, ուր կազմավորվել են առաջին ցեղա-ազգային միավորումները - պետությունները. ձևավորվել ու պատճական օրինաչափ գարգացում ապուել մշակույթը գիր, գրականություն, գիտություն, արվեստ, դպրոց...: Դրան ապացույց նյութական մշակույթի, բազմաբնույթ հուշարձանները և այսօր իսկ արդեն գիտականորեն հիմնավորված, մեզանից 4500 տարի առաջ գրի գոյությունը, Միջագետքում/ Շումեր/, անգամ 5500 տարի առաջ Եղած, հայտնաբերված պատկերավոր կավե սալիկները, որոնք ճանաչվում, համարվում են որպես խորհրդավոր գիր:

Մշակույթ, գիտություն, գիր... և առանց դպրոցի պատկերացնել անհնար է:

Եվ ահա, սկսած 35-30-րդ դարերից /մ.թ.ա./ Շումերում մի փոքր ուշ Աքքաղիայում, Եգիպտոսում և Յին Արևելքի մյուս երկրներում բավականին հիշատակումներ կան դպրոցի, վարժարամների մասին:

Ուրուկ. Քիշ, Երևա և այլ քաղաք-պետություններում պեղումների շնորհիվ հայտանբերվել են հազարավոր կավե սալիկներ բազմաբնույթ բովանդակությամբ... փաստորեն այօրվա մտածելակերպով հարուստ արխիվներ «գրադարան», հաշվետվություններ, առևտրատնտեսական փոխհարաբերություններ, գիտական բանավեճ-հաշվետվություններ, թոշումների, բույսերի, հանքատեսակների, կարնասունների, ձկների... անձնական անունների... սալիկներ... ինչպես և բառարաններ / շումերա-երևայական, 3000 բառ / գրական ստեղծագործություններ բանաստեղծական պատումներ, նյութեր աշխարհագոյացման, ջրհեղեղի... սեպագիր ուսուցման հատուկ դպրոցների մասին անգամ աշակերտական «տետրեր» սխալների ճշտմանը, որը /հավաքար/ կատարել է ուսուցիչը... եղուբրա-շումերական դպրոց... կյանք... ուսուցման գործընթաց... Շումեր Բարելոնում /Եգիպտոսում/ մարենատիկան դասավանդվում էր որպես լոկ գործնական ունակությունների համակարգ, Յունաստանում նաև տրամաբանական մտածողության գարգացման նկատառումներով:

Եղուբրի - տախտակների տուն... այլ կերպ գրադարան:

Երևա /2400-2250 թթ.-/ մեծ ուշադրություն կրությանը. փաստորեն պետական հսկողություն... 2250 թ. Աքքաղի գործերը / Նարումսին գոյ-6

րավարը/ գրավեցին Եբլան և հրդեհեցին, իսկ վերջնական կործանումը խեթերի կողմից 1650 թ /մ. թ.ա./... և Շումեր-Աքքաղին պատճական ասպարեզից դուրս եկավ: Շումեր-Աքքաղյան դպրոցից փոքրիկ նշումներ.

- Յոր խրատը որդուն. «Դու մարդաշատ հրապարակներում անգործ թափառող... ժամանակը անցնում է... կցանկանայի՞ր դու հաջողության համենել... մարդ դառնալ... եթե այս, ապա հայացք նետիր թեզմից առաջ եղած այն սերունդներին, որոնք կրթություն են ստացել... գնա դպրոց. այն թեզ բարիք կրերի, որդիդ իմ, նայիր նախորդ սերունդներին, հարցորդ նրանց և պատասխան ստացիր. դու հյուծեցիր սիրտս քո ոչ վայել արարքի-պահվածքի պատճառով... իմ սիրտը խոցված է... քո վարքով իմ հասցրիր վերջնակետին, գերեզմանի եղուն... թեզ նմանները աշխատում, օգնում են ծնողներին, իսկ դու՞... դու տղամարդ ես գուտ քո համառությամբ, իսկ մյուսների հետ համեմատած դու տղամարդ չես»:

- Տղայի բողոքը հորը. - Յայր, դու մեր ուսուցչի նկատմամբ ուշադիր չես, այդ պատճառով է նա իմ «Բանի տեղ չի դնում»... այ /անուն/ նրա հայրը միշտ ուսուցչի նկատմամբ ուշադիր է /սիրաշահում է/ և ուսուցիչը նրան միշտ լավ է վերաբերվում, իսկ իմ՝ ոչ / անտարբեր է/:

Շումեր-Աքքաղիայի օրգանական շարունակությունն էր Ասորեստան-Բաբելոնը, որը ևս նշանավոր կենտրոններից էր ուր ծավալվում էր լուսավորական, մշակութային լայն գործունեություն. դպրոց, ուսուցում-դաստիարակություն-գրագիտություն... անգամ 668 թ/մ.թ.ա./ Նիմ-վեռում բուսաբանական այգի, ուր հատուկ գրավել են դեղաբույսերի մշակմամբ... ապացույց բարձր գարգացման, որն անհնար է առանց դպրոցի, կրության:

ԵԳԻՊԵՏՈՒ - 30 -րդ դարից /և առաջ/ գիր-հիերոգլիֆայիմ... հիշուն են նաև հիերոտական, դեմոտական դպրոց. /նաև ռազմա-ֆիզիկական բովանդակությամբ/: Եցարիտ գիտությունների ուղղվածությամբ /հիմնականում/ Յիշվում են նաև խրատա-բարոյախոսական գործեր ուղղված հանրությանը կամ անհատի /պարզ է ընդհանուր ընդգրկումով/:

Այսպես հիմնգերորդ հարստության /2450-2315/ ժամանակ պալատական Պտագոտեպը արակների ծևով խորհուրդ-խրատներ է տալիս որդուն, որը գեղարվեստական շեղումներով բարոյախոսություն է քարոզում, նպատակադրելով շտկել կյանքում տեղ գտած թերություն-շեղումները և նշել ծիշտ, ընդունելի, կիրառելի միջոցները:

Ամենեմոյը /16-րդ դար մ.թ.ա./ կազմել է նույնարնույթ «խրատների ժողովածու»:

¹ 612 թ/մ.թ.ա./ Նիմվեի անկման տարին, Պարույր Սկայորդու գահակալության սկիզբը:

Ամենհորեապ 4-րդը / 1367-1350 թթ/ մեծ բարեփոխիչ էր, կրոնական մեծ բարեփոխումներ է կատարել, մտցնում է միաստվածություն... ընդլայնում է դպրոցական ցանցը, ոչ միայն աշխարհիկ, այլև մեհենական մեհյաններին կից... զարկ տալով նաև կրոնա-մշակութային գործունեությունը: Նոր թափ է ստանում նաև ռազմա-ֆիզիկական կոթությունը:

4-3-րդ դարերը /մ.թ.ա/ Եգիպտոսում /երբ արդեն աստիճանաբար դուրս է մղվում պատմական ասպարեզից/ գործել են բավականին հառուստ գրադարաններ: Բրուգիոնի պալատի գրադարանում - 100 հազար, Սերազիսի մեհյանում 70 հազար գիրք... դրանք վառ ապացույց են դպրոցի ողջ մշակույթի բարձր մակարդակի հավաստման:

ՉԻՆԱՍԱՍԱՆ: Յին աշխարհի մշակութային մեծագույն կենտրոններից: Կրությունը մեծ տեղ է հատկացվում. դպրոցը անհրաժեշտություն էր: Անցնում էին տարբեր և ճշգրիտ, մաթեմատիկական, բնագիտական, և այլ հումանիտար առարկաներ: Յատկապես նշենք բնագիտա-բուսաբանականը. դրա ապացույց հետաքրքրությունը բժշկա-դեղագործականի նկատմամբ: Ըստ ավանդության դեռևս 3200-ական թթ. հիշատակումներ կան բույսերի- բուսաբանության մասին, իսկ 2500 թ. հիշվում է առաջին «բուսաբանական գիրքը» 900 բուսատեսակների բժշկա- դեղագործական նկարագրությամբ: Ավելի ուշ, միջնադարում /695 թ. հարցին նորից չանդրադառնալու նկատառումով ժամանակաշրջանը խախտելով, մեջբերում ենք այստեղ/ Հի-Դին /համահեղինակությամբ/ վերամշակեց ու ներկայացնեց «Սին-Սյու-Բեն-Ցառ» խորագործ բուսական 844 դեղամիջոցի պատրաստում և կիրառում բովանդակող գիրքը: XVI դարում Լի-Շին ժենը 27 տարի աշխատելով պավարություն է «Բեն-Ցառ-Գան-Մու» /«Ղեղաբանության հիմունքները»/ աշխատությունը. ամփոփ ներկայացնելով 1892 հիմնականում բուսական դեղամիջոցներ:

Արվեստը, գեղագիտությունը, երաժշտությունը կարևոր տեղ ունեին... սովորույթ-ծիսակատարությունների պահպանումը անգամ պարտադրյան աստիճանի էր:

Ռազմա-ֆիզիկական անտեսված չէր. նետաձգություն, կառք վառել, նարտարվեստ... և այլն:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆ /Կուն-Ցահի/ /551-479 թթ/: Յանրագիտակ, բազմարնույթ, հարց-դրույթների խորագիտակ մեկնաբան: «Զրույցներ ու դատողություններ», «Լուսյա»... Անդրադառնում է մարդու եւթյան մեկնաբանություններին, արժեվորում դաստիարկության, կրթության կարևորությունը:

ՉԺՈՒԱՆ - ՉԺՈՈՒ /Չժուան-Ցահի/ /369-286/:

Բարձր է գնահատում մարդ արարածին» Նրա ձևավորմանը, զարգացմանը /կրթություն, դաստիարակություն/ ընդգծում է մարդ անհատի բնությանը ձուլվելու կարևորությունը... որն ոչ այն ինչ է, քան բնահարմարություն:

ՉՆԴԿԱՍՏԱՆ: Յին Արևելքի մյուս մշակութային կենտրոնը: Երկրորդ հազարամյակի վերջ-առաջին հազարամյակի կեսին /մ.թ.ա./ ստեղծված Վեհաների /վենագիտնելիք. Ոիգվենա-ներբող, հիմն, Սամավենա- նեղեղի, նոտա, նշանագիր, Յաջուրվենդա-զոհաբերություն, բանավեճ, Աքարվագվեղահամայիլ, անեծք/ հայրենիքը սրբազն այդ ուսմունքների բնօրուանն է: Փիլիսոփայական մտածելակերպը - ջանիզմ - «Սի սպանիր», «չարիք մի գործիր» հնդկական բարոյականության սկզբունքները /«Սանույի օրենքով»/ կրոնական բովանդակությամբ և նման /աստվածաշնչային/ դրույթներ:

Սպանիչադ վեղա, մարդկային ամենաազնվագույն մղումներից թխող երեք ԴԴ-ի սկզբունքը դարթա-տուր, դայադիվամ-կարեկցիր, դամյաթա- կառավարիր /իհարկե, նախ ինքը քեզ... ապա հետո/: Նույնանման է Տիբեթական «Չուշչի»-ն - հրաժարվիր վատից, որքան էլ հրահրեն, արգելակեն, կատարիր լավը. սիսալ, պարտությունտ ընդունիր, հաղթելիս եղիր զուսպ, հիմարներին իշխանություն մի տուր. անուսության ժամանակ խուսափիր արյունակից հարազատներից /ինչպես Աշտիշատի կանոնադիր ժողովում/:

Ընդհանրապես Յին աշխարհում գրագիտությունը /դպրոց, կրթություն/ ավելի լայն տարածում ունեն քան միջնադարում: Արևմտյան քրիստոնեական միջնադարը, ցավալիորեն, որոշ սահմանափակումներ էր մտցնում:

ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

Անտիկ /հունա-հռոմեական / մշակույթի պատմական ժամանակաշրջանները:

ա) Կյուցազմական-հնագույնից մինչև Տրոյա:

բ) Հոնիական-Տրոյայից մինչև Սոլոնի սահմանադրությունը /594 թ. մ.թ.ա./:

գ) Արքիլիան – Սոլոնից մինչև Ալեքսանդր Մակեդոնացի /330-ական թթ. մ.թ.ա./:

դ) Ալեքսանդրյան /հելլենիստական/: 330-ականից մինչև 146 մ.թ.ա./; Կարթագենի կործանումը: Հունաստանի անկումը:

ե) Հունա-Հռոմեական – 146 թ. մինչև Մեծն Կոնստանտիանոսի օրենքը /306 թ. մ.թ. / հունականի խաճրումը, հռոմեականի ոսկեդարը:

զ) Բյուզանդական – 306 թ. մինչև 1453 թ. անկումը /մինչև VIII դար-հռոմ-լատինական լեզվով, ապա նորից հունարեն . բայց ոչ նախկին փառքով/:

Դպրոցի դաստիարակության հարցերին կանորադառնանք միայն 3.4.5 ժամանակաշրջաններին, որոշ վերապահումներով և 6-ին:

Հունաստանը մասնատված էր քաղաք-պետությունների /պոլիս-ներ/ դրանցից գորենուն էին Աթենիկա /Աթենք/ և Սպարտան /Լակոնիա/, որոնք էլ իրենց կամքն էին թելադրում մյուսներին... Թերե, Իթակա, Թեսալիա, Արգոս, Մեգատա, Մակեդոնիա...

Անտիկ, հատկապես հունական միտքը ժամանակին յուրացնելով Հին Արևելի մշակույթը /քառացի չընկալել/, հետագայում դարձավ «Մայր և դայակ ամենայն իմաստից» /Գրիգոր Տղա, 1193 թ./:

Սոլոնի ժամանակներից ծևավորվեցին Երկու ծևի-թուվանդակության դպրոց ու դաստիարակություն սպարտյան /սպարտական/ և աթենական:

ՍՊԱՐՏՅԱՆ. զգալի էր «դասային» բաժանումը-սպարտիականներ, պերիեկներ, իլուտներ: Դպրոց-դաստիարակությունը պետականացված էր ընդգրկումը 7-18 /հաճախ 19-20/ տարեկանը, խստագույն կարգապահություն, ռազմա-ֆիզիկական դաստիարակություն. ամիսներով ճամբարներում, դաստիարակը պեղումը: 18-20 տարեկանը էֆերների խումք /էֆերոս-ερεβεօս - ազատածին պատանի /փաստորեն զիվուական ծառայություն ... 30 տարեկան կարող էին վերադառնալ «տուն», ամուսնանալ: 50-ից ընտրվել անգամ սենատում / հերոսիա/:

Աղջիկները և որոշ չափով նման դաստիարակություն էին ստանում: Արիստոտելը յուրօրինակ /թվում է ոչ ծիշտ/ մոտեցում ուներ սպարտուիթիների դաստիարակության մասին. ըստ նրա՝ Սպարտան

թանկ վճարեց կանանց հանդեպ ցուցաբերած ազատամտության հանրա... դրանով խարխլեցին քաղաք-պետության հիմքերը:

Սպարտյան դաստիարակությունը միակողմանի էր, հիմնականում բացակայում էր մտավոր կրթությունը:

ՍԹԵՆՍԿԱՆ: Ավելի դեմոկրատական սկզբունքներով, մասնավոր դպրոց և միայն տղաների համար, ստրուկները, օտարերկրացիները դպրոց մուտք չունեին... Դաստիարակությունը համակողմանի էր: /Տես աղուսյակ 1/:

Աղջիկների դաստիարակությունն ընտանեկան էր, ոա չի նշանակուն, որ կանայք մտավոր /և համակողմանի/ կրթություն-դաստիարակություն չեն ստացել և չեն հմտացել որևէ մասնագիտության մեջ... Այսպես Դիոգենեսի դրամարդ Ֆեորիրան գրադպում էր Երկրաչափությամբ, Պյութագորասի կինը Ֆենան փիլիսոփայությամբ, շատ կանայք գրադպել են թժկությամբ, արվեստով... Լեսբոս կղզում իր դպրոցը ուներ բանաստեղծուիկ Սապֆոն /VII դ. Վերջ - VI դ. սկիզբ/, ապա իր աշակերտուիկ Էրինան...

Հունաստանում, ինչպես և Հին արևելքում /նաև Հայաստանում/, Հռոմում սովորական դպրոցներից բացի գործում էին նաև բավարար տարածում ստացած /միջին դարերում ավելի/ խնամակալության-խնամածության տներ-ապաստարաններ պետության, համայթի, մեջյանների /ավելի ուշ վանքերի/ հովանավորության, հոգածության ներքո, նախատեսված անապաստանների, որքերի, ընկեցիկների համար:

ՅԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՐԺԱԿԱՆ ՄԻՏՔԸ:

ՅՈՒՅՆ ՄՏԱԾՈՂՆԵՐԸ ԴՊՐՈՑԻ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՅԵՍԻՐՈՂՈՍ /VIII-VII - դր. մ.թ.ա./ հեղինակ է ուսուցողական-խրատական-բարոյախրատական «Աշխատանքներ և օրեր» պոեմի:

ՍՊՓԵՍՏՆԵՐ /VII-V - դարեր/: Շրջիկ փիլիսոփա-ուսուցիչներ, գնահատել են կրորության կարևորությունը:

Եռուղի /trivium/ - քերականության, ճարտասանություն, դիալեկտիկա /գիտության-առարկաների սկզբանավորող-հիմնավորողներ... Յետագայում սովորական որակեցին իմաստակներ¹, որոնց «ստիճան և ծշմարդին մեջ ամենին տարբերություն չկա» /Պրոտագորաս, որոնք ծգտում են ոչ ծշմարտության, այլ օգուտի /Վրիստոտել/:

ՍՊԿՐԱՏԵՍ /469-399 թթ./ ինքնաճանաչում «Ծանիր գքեզ»: Կրորության հիմքը հարցափորությունն է... ծգտել առաջինության, երջանկության... գործել բանականությամբ...դաստիարակություն, վերադաստիարակություն-սխալի շտկում... Զորովյի մեթոդ, խորի առաջադրում-ինքնուրույն մտահանգում... «գիտեմ, որ չգիտեմ» ... Սոկրատեսն առաջինն էր, որ բարոյականությունը ներկայացրեց, որպես ուսմունք, դրանով իսկ սովորականությունը «զենքը» իրենց դեմ դարձրեց: Այդպիսով նա փիլիսոփայությունը «երկնքից գետին» իշեցրեց /Կիկերոն/:

ԴԵՄՈԿՐԻՏԵՍ /460-370 թթ./: Բնահարմարություն. Բնություն և դաստիարակություն, ապրիր ու գործիր հարմարվելով բնությանը... այդպես է ցանկանում բնությունը... Աշխատանքը դաստիարակության միջոց, իսկ դաստիարակությունը վերափոխում է մարդուն...դա նրա երկրորդ բնությունն է:

ՔԵՆՆՈՓՈՆ /430-355 թթ./: Յեղինակ «Կյուրոպեդիա» /«Կյուրոմարց» կամ «Կյուրոսի դաստիարակությունը» - 365-358 թթ. Յայերեն «Կյուրոսի խրատու պատմությունը»- Վենետիկ, 1843 թ./: Բարոյախրատական /պատմա/վեպի նվիրված Տիգրան Ա.Երվանդյանի մտերիմ որսընկեր, Աքեմինյան աշխարհակալության հիմնադիր Կյուրոս Մեծին /550-529 թթ./, ցանկանալով ցույց տալ թե ինչպիսին կցանկանար տեսնել մարդկային բարոյականության դրսնորումները:

¹ Սովորուս- իմաստակ, սովոս-իմաստություն, մորոս- հիմար:

ՊԼԱՏՈՆ /428-347 թթ./: Պետական սկզբունքներով դպրոց -դաստիարակություն, ռազմականացված պետականություն:

Աքենական-սպարտյան դաստիարակության միացում: Յայացքներն արտացոլված են «Պետություն», «Օրենքներ» /«Յաղագս օրինաց»/ գործերում: Վերջինիս 7-րդ գիրքը «Որդվոց դաստիարակություն» նպատակադրում է «աստիճանական բերումն դեպ ի կատարելուն»... ուղիները՝ խելացիորեն գրադեցնել մանկանց, ճանաչել, նոր խրատել. ինքնասիրությունը չշշչափող պատիժներ, երեխայի խաղն ուսուցում է, խաղի ազատություն, ինքնաստեղծագործություն. աստիճանաբար հանգել ինքնաճանաչման: Կնոքը և տղամարդուն նույնաբնույթ աշխատանքներ. կարևորում է ֆիզիկական դաստիարակությունը, նաև կանանց համար, նույնիսկ առաջնահերթորեն... Ամեն ինչ հանգեցմել առաջինության, արդյարության:

Ունի իդեալիստական նաև ուսուպիստական հայացքներ.

Յոգին ունի երեք դրսնորում.

1. բանական-փիլիսոփաներ-դեկավարում,

2. կամային-զինվոր-ռազմիկներ,

3. զգայական-արհեստավորներ, գյուղացիներ...

1-2-ին համակողմանի, լավ կրորություն- դաստիարակություն,

3-ին - կարևոր չեն, պետք չեն:

ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Տարիքը. 3-6 նախադպոցական խաղեր.

7-12 ընդհանուր կրորություն

12-16 ֆիզիկական դաստիարակություն, պալեստրա

16-18 Մտավոր կրորություն

18-20 էֆերիա

-30 բարձրագույն ... ցմահ

Պլատոնը ուսուպիստական հայացքներ ուներ / կոնունայի սկզբունքներ / ժխտում է ընտանիքը: Զույգերը փոփոխական են, միայն երեխայի ծնության նպատակներ:

ԱՐԻՍՏՈՏԵԼ /384/3-322 թթ./ փոքրուց ծնողագուրկ /հայրը բժիշկ-Նիկոմարոս/ 17 տ., աշակերտել է Պլատոնին. «Արիստոտելը սանձիկարու է, բայովութեած մտրակի» /Պլատոնը իր աշակերտների մասին/:

Յոգին

- Բուսական - Դաստիարակությունը միայն դրականը
 Կենդանական - Ֆիզիկական-վարժություններ
 Բանական - բարոյական-շնորհալիություն
 Երեք կողմերը միացված են, համագործակցված, ընդհանրացված:
 Տարիքային պարբերացում.
 0-7 – նախադպրոցական, ֆիզիկական ձևավորում,
 դաստիարակություն.
 7-14 – ֆիզիկական, գեղագիտական, մտավոր
 դաստիարակություն.
 14-21 – ֆիզիկական /որոշ չափով ռազմական/
 դաստիարակություն մտավոր կրթություն, գիտու-
 թյունների ուսումնասիրում:

Ամեն ինչ հաճածայնեցված բնության օրինաչափություններին-բ-
 ռահարմարությանը:

Այդ ամենով ապահովվում է օրգանիզմի համակողմանի զարգա-
 ցումը - ֆիզիկականով սկսել և մտավորով /«Մտավոր կրթության հա-
 մար հարմար է Լյուլրացոց երաժշտությունը», Արիստոտել/ և մյուսնե-
 րով ավարտել: Այս ընթացքը զուգակցված աշխատանքի հետ, անգոր-
 ծությունը հյուծում է մարդուն: Աշակերտից պահանջվում էր ինքնու-
 րույնություն, ինքնակամություն... բայց ոչ կամակորություն. հասիր
 նրան, ով առջևում է, մի սպանիր նրան, ով ետևում է...

Աշխատանք և աշխատել... ոչ մի բան այնպես չի հյուծում և քայլա-
 յում մարդուն, ինչպես տևական անգործությունը: Բնությունից տրվածը
 հնարավորություններ են. դրանք պետք է վերափոխենք իրականու-
 թյան... պետք է գործել: Ով առաջ է շարժվում գիտությունների գծով,
 բայց ետ է մնում բարոյականության մեջ, նա ավելի շատ ետ է գնում,
 քան առաջ... ուսուցանում է մեծ փիլիսոփան:

ՊԻԼՍՆ ԵԼԻՍԱՑԻ /Ելիդացի – 365-275 թթ. / : Սկեպտիկական դպ-
 ուցի /ուղղության/ իիմնադիր, աշխարհն անճանաչելի է. մարդն անկա-
 րող է ճանաչել իրերի երթյունը... գտնել ծշմարտությունը...

Դաստիարակության, կրթության նպատակը, կյանքի երթյունը
 առաջինությունն է. ծգտել ու հասնել դրան:

Յին Յունաստանում **VI դար մ.թ.ա./** աստիճանաբար ձևավորվում
 է «Գիտությունների որոշակի համակարգ», այն է «Եռուլին» /trivium/,
 որը ներառում էր քերականություն, ծարտասանություն, դիալեկտի-
 կա... հետագայում դրան գումարվում է «քառուլին» /quadrivium/ -
 թվաբանություն, երկրաչափություն այդ ժամանակներից մինչև միջնա-

դար /XIII-XIV դդ/ հիմնականում դպրոցում իշխող գիտություն-առար-
 կաներն են եղել այս «յորն ազատ արվեստները» /septem artes
 liberales/, իհարկե, ոչ նման «ներ» անվանում-ընդգրկումով, այլ զգա-
 լի լրացում հավելումներով, իսկ հետո աստիճանաբար գիտություննե-
 րի մասնատում-քաժանումով ... նոր ու նորագույն գիտությունների
 առաջացումով... միաժամանակ նշենք, որ գիտությունները ոչ միայն
 բաժանվում-մասնատվում /դիֆերենցվում/ են, այլև միակցվում-միա-
 վորվում /ինտեգրվում/: /Տե՛ս այսուսակ 2/:

ՀԵԼԼԵՆԻՑԱ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԴՊՌՈՅԸ

Հելլենիզմը սկզբանվորվում է 330-ական թթ. /մ.թ.ա./ Ալեքսանդր Մակեդոնացու /356-336-323 թթ./ գահակալման ժամանակներից: Ալեքսանդր Մակեդոնացին արքա Փիլիպոս 2-րդի¹ /359-336 թթ./ /կաղ. միացքանի/ մերժված կոնջ Օլիմպիայի որդին էր: Աշակերտել է Արիստոտելին²: հետագայում մեծ գումարներ է տրամադրել նրան գիտական կարիքները բավարարելու:

336-334 թթ. Հունական պոլիսների ազատագրական պայքարը ճնշելուց հետո 334 թ. սկսեց հաղթարշավը պարսիկների դեմ և նվաճեց Եգիպտոսը /332-331 թթ./. 331 թ. հոկտեմբերի 1-ին Գավգամելյախի /Փոքր Ասիա/ ճակատամարտում ջախչախնեց հզոր պարսկական զորամիավորումները... ճանապարհը «բացվեց»... և այդպես մինչև Հնդկաստանի արևմտյան տարածքները...

Արևել-Արևմտք ժողովուրդների այս հսկայական զանգվածների մշակութային ներքափանցումով ձևավորվեց նոր որակի հզոր մշակույթ, որն ի տարբերություն հելլենականի /հունական/, հետագայում անվանվեց հելլենիստական: Արևելյան մշակույթները սկսեցին թափանցել-նվաճել արևմտյան տարածքները³ /և հակառակը / և խառնվել տեղականին արդեն իսկ Ալեքսանդրի ժամանակ... հետագայում. հռոմեական տիրապետության տարիներին այն ուժեղացավ և իր ծաղկման հասավ մեր թվարկության երկրորդ դարում:

Ալեքսանդր Մակեդոնացին լինելով խոշոր ռազմա-քաղաքական դեմք, անկասկած և մշակութային մեծ գործիք էր:

Նա 331 թ. հիմնեց Ալեքսանդրիան /Եգիպտոս. հետագայում նույնանման մի քանի քաղաք նվաճված տարածքներում/. հիմնեց գիտական կենտրոն /ակադեմիա/։ Կից աստղադիտարան, դիահերձարան, կենդանաբանական, բուսաբանական այգիներ, նախաձեռնեց գրադարանի հիմնադրումը⁴ /այն ձևավորվեց III դարասկզբին Սերապիս տա-

¹ Փիլիպոս 2-րդի նամակն Արիստոտելին. «Ես այնքան ուրախ չեմ, որ որդի է ծնվել, որ քան այն, որ նա ծնվել է այն ժամանակ, երբ քեզ նման մեծությունը կա և նրա դաստիարակության համար իրավիրում են քեզ»

² Ես մեծարուծ եմ Արիստոտելին հորս հավասար, քանզի եթե հորս պարտական եմ իմ կյանքով, ապա «Արիստոտելին այն ամենով, ինչը կյանքն արժեքավորում է» Ալ.Մակեդոնացի:

³ Ըստ Զարդիհանայինի և Ա.Սոռաքըլյանի Արևելյան մշակույթի հենքի վրա ձևավորվում, զարգանում է հելլենիստականը... և այն արևելյան է:

⁴ Ալեքսանդրը գրքից ամբաժան էր, բարձր էր գնահատում Հոմերոսին «ավելի լավ է հինականի մեջ մերսին ըլլալ, քան ուրիշ քերթողաց գրվածոցը մեջ Աթլիլս»... իր սուրբ ու Հոմերոսը միշտ հետն էր:

ճարում-շուրջ 700000 գիրք/: Այլ ծեռնարկումներ. Արաբիայի ափերի հետազոտում, Եփրատի վրա հիդրոտեխնիկական կառուցմների ընդլայնում, տաճարների կառուցում Բաբելոնում, Դելոսում, Դելֆում... նույնիսկ նախագծում Կասպից ծովը օվկիանոսին միացնելը... և այս ամենի հիմքում լուսավորություն, դպրոց, կրթություն: Նա դեկապարզում էր ժողովրդավարության սկզբունքներով. գինվորի հետ գինվոր էր... անգամ հագուստով չէր տարբերվում նրանցից...

Ալեքսանդրի մահից հետո հսկա, բայց լրիվ չկազմավորված պետությունը մասնաւովեց երեքի ասիականի /Սելեվկոս/, Եգիպտականի /Պտղոմեոս/ և հունա-մակեդոնականի /Անտիոքոս/:

ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅՈՒՆ - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ - ԴՊՐՈՑ

Դպրոցը նման էր աթենականին /բայց ոչ կրկնություն/. այն պետական էր կամ հասարակական-համայնական:

ԿՐԹԱՍՏԻԹԱՆՆԵՐԸ

0-7 տարեկան-տնային / ընտանեկան / կրթություն, դաստիարակություն

8-12 տարեկան - գրածանաչության դպրոց

13-16 տարեկան-գրամատիկա-քերականական դպրոց | կարգի դպրոցներ

17-19 տարեկան - գիմնազիոն 3+4=7

20-22 տարեկան - էֆերիա. տեսական դասընթաց. Հին Հունաստանում հիմնականում ռազմա-ֆիզիկական ուղղվածությամբ:

23-31 տարեկան - փիլիսոփայական դպրոց, 4 ուղղությամբ-ականինա, լիկեյ, ստոիկյան, էպիկուրյոն:

Ընդհանրապես զգալիորեն զարկ էր տրվում բարձրագույն /բարձր/ կրթությունը⁵:

Նշված սկզբունքներով մեծ թվով դպրոցներ կազմակերպվեցին Արենքում, Պերգամում, Ալեքսանդրիայում, փոքրասիական շատ ու շատ քաղաքներում... նաև տաճարներին կից:

Հելլենիզմի ժամանակ կարևորվում էր ֆիզիկական դաստիարակությունը, բայց խիստ առաջնակարգ չէր ինչպես Հին Հունաստանում /աթենական, ել առավել է սպարտյան/: Տիրապետող էր, գերիշխում էր ընդհանուր - համակողմանի կրթությունը, հատկապես ճարտասանու-

⁵ Ալեքսանդրյան վարժարաբան ծոտափոր նմանություն ուներ այսօրվա բարձրագույն դպրոցին:

թյունը - հրետորությունը:

ՀԵԼԵՆԱԿԱՆ ԴՐԱՋՈՒ ԴՐԱՆԵՐԸ Բաց էին ՕՄԱՏԻՒՐԱԳԻՒՆԵՐԻ ՀԱՃԱՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ ԱՅՆ ՇԱԽԱՏԵՍՎԱԾ ԷՐ ՄԻԱՅՆ ՀԻԼՅԱՆԵՐԻ ՀԱՃԱՐ:

ՀԻՆ ՀՈՒՆ

Դպրոցն ու դաստիարակությունը.

Պատմական ժամանակաշրջանները:

ՆԵՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՂՄ. /հնագույն ժամանակներից մինչև VI դարավերջ / - 510 թ. ա. լ. դաստիարակության բովանդակությունը /և ձևերը/ նույնն է, ինչպես նախնադարյան հասարակարգում և վաղ ստրկատիրության ժամանակներում:

ՀԱՄԱՍՏԱԿԱՆ ՀՈՂՄ. /510թ.-30թ. թ.ա./ դպրոցը հիմնականում մասնավոր - Iudus - հիմնականում նախնական /տարրական/ գիտելիքների մակարդակով. նպատակադրումը՝ հաճրապետությանը նվիրված քաղաքացիների դաստիարակում... նաև քերականական դպրոցքարձր տարրական աստիճանի, ապա՝ ճարտասանական-միջինքարձր աստիճանի trivium-ը իշխում էր:

ՓՅՈՒՆԻԿՅԱՆ ԿԱՐԹԱԳԵՆՅԱՍ /Կարթագեն. Փյունիկերեն Կարթաղշտ - նոր քաղաք «Garthaginem esse delandam» «Կարթագենը պետք է կործանվի» /«Կատոն Ավագ/ «Թող կործանվի Կարթագենը» պատերազմներից /264-241, 218-201, 149-146/ հետո հունական ազդեցությունը, որը մինչև այդ էլ զգալի էր, էլ ավելի է գորեղանում:

Փյունիկյան պատերազմների ժամանակ հույն զաղքականները անցնելով Խոտախա /սկզբում հարավային գավառներ/ ծաղկեցրին մշակույթը, գիտությունը, կրթությունը, արվեստները, հունարենը սովորական էր. դպրոցում ևս այն զգալի տեղ ուներ:

Առաջին դարում /մ.թ.ա./ իր բարոյախոսական ուսուցանող խորհրդական հանդես է գալիս Պուբլիլիսոս Սիրոսը. դրանք բովանդակում էին ազնվություն, ակտիվ գործունեություն, մտքի, սրտի մաքրության, պարզություն /ոչ պարզամտություն/, մեծահոգություն... մարդկային բազում դրական հատկանիշներ, որոնց վերջնական հաճախությունն է առաքինություն, որի էությունն է բարոյական կատարելություն:

Հունական միտքը ներթափանցում է Հռոմ, նույնիսկ հույն մշակույթ

թի նշանավոր գործիչներին վերաբնակեցնում էին Հռոմում և այն էլ ոչ միշտ կամավորության սկզբունքով:

146 թ. /թ.ա./ փաստորեն ոչ միայն Կարթագենի, որպես պետություն, պատմական ասպարեզից դուրս մղվեց, այլ այդ թվականը նաև Հին Հունաստանի անտիկ մշակույթի ավարտն է: 87-86 թթ. Սուլլայի հրոսակները գրավում-ավերում են Աթենքը... և «կողոպտում ողջ մշակույթը»... ճիշտ է, եթե գրում են «Հռոմը մի տեղ որ մտնում է /գրավում/, այլևս այդտեղից կամավոր դուրս չէր գալիս»:

ԿԵՐԳԻԼՑՈՍՍ/70-19 մ.թ.ա. /ավելի խիստ է գրում «ուրիշ ազգեր... արվեստից և գիտությանց ետևե կըլլան, բայց քո արվեստը, ով հօռմեացի, միայն ազգերն ընկճելու և զանոնք խոնարհեցնելու վրա է»:

ՄԻՄՊԵՏԱԿԱՆ ՀՈՂՄ. /31-30 թ. մ.թ.ա. մինչև Հռոմի անկումը 476 թ./ դպրոցը պետական բացվում են բարձր տիպի դպրոցներ, նաև մասնագիտական - արվեստի - գեղագիտական:

320-ական թվականներից քրիստոնեության ընդունման և իշխող կրոն դառնալուց հետո դպրոցն աստիճանաբար անցնում է եկեղեցու տնօրինությանը. փոխվում է և ձևը, և բովանդակությունը: Քրիստոնեական հավատ-բարոյախոսությունը դառնում է տիրապետող:

Հին անտիկը /«մոռացվում», վերանայվում, վերափոխվում և հարմարեցվում է Աստվածաշնչային դրույթներին. այն, ինչ չէր «հարմարվում», չէր «համապատասխանում» կամ հակադրվում էր, լրիվ մերժվում էր, արգելվում:

ՔՎԻՆԹԻԼԻԱՆՈՍ ՄԱՐԿՈՍ ՖԱՄԲՈՍ /1 դար, տարբեր աղբյուրներում տարբեր թվականներ են բերվում - 35-96 թ., 42-118 թ. /Աշխատությունը «ճարտասանի դաստիարակության մասին», 12 գիրք. լրիվ հայտնաբերվել է 1415-1416 թվականներին.- «De institutione oratoria».

Ազգությամբ խապանացի «Ցնցուիներ հագած արքան»... Հունում ուներ ճարտասանական դպրոց, որպես փաստաբան հաճախ հանդես էր գալիս և դատավարություններում: «Աշխարհիս չորս կողմեն մարդիկ կվագեին անոր դասախոսություններ մտիկ ընելու»¹ ...

Կարևորում է հասարակական դաստիարակությունը, առաջնությունը տալով դպրոցին, հավատ երեխաների հնարավորություններին, ճանաչել նրան, հաշվառել նրա անհատականությունը... ֆիզիկականը և մտավոր գուգակցել ... և հերթագայել... դեմ էր մարմնական պա-

¹ Սեղբերությունները վերը և հետո 9. Զարդիանայանի «Պատմություն, մատենագրության Հունաց, Հունվագից և Հայոց եկնեցվոց» գրքից են, Վենետիկ, 1856 թ.

տիժներին...

Ուսուցչի աշխատանքը պատվաբեր է. նա օրինակ է և պետք է լինի օրինակելի, սիրի իր գործը և երեխաներին, գիտակ իր գործին /մասնագետ/, աշխատասեր, արդարամիտ. բովանդակալից և հետաքրքիր դասավանդել, շարժել հետաքրքրասիրությունը, անպատասխան չողողնել ոչ մի հարց... նախապես նա պետք է աշխատի ցածր /տարրական/ խմբերում /փորձի ձեռք բերում/, ապա բարձր աստիճանում: Դասավանդման ժամանակ կիրառել /օգտվել/ տարրեր, բազմաբնույթ մեթոդներ, դեկավարվել դիդակտիկ սկզբունքներով և այլ ու այլ մանկավարժական մոտեցումներով:

Սովորել միշտ և ամենուր. ընթացքն հավերժ է...

Զարգացնել միտքը, մշակել ոճը... և միշտ առաջ նայել:

ՄԻՋԱՇԱՐ

Եկրոպական միջնադարը պատմագրության մեջ սկզբնավորվում է Հռոմի անկումից 476 թ.: Մշակույթի /մեզ համար դպրոց, դաստիարակություն/ պատմության խնդիրների մեկնարաննան նկատառումներով նպատակահարմար է այն սկսել չորրորդ դարակեսից, երբ Բյուզանդիայում, Հռոմում և այլուր քրիստոնեությունը դարձավ իշխող կրոն և այն իրեն հպատակեցրեց ողջ մշակույթը դպրոց, լուսավորություն, դաստիարակություն... և իշխեց նոր հավատի ոգին:

Նոր ժամանակներ, նոր միտք:

Քրիստոնեական վարդապետությունը վերափոխեց հեթանոսական-աշխարհիկ ամեն ինչ... և շատ բան կործանվեց... տիրապետեց աստվածաբանությունը: Պակասը լրացրեց Գրիգորիոս առաջին Սեծը /-540-604 թթ., 590 թ-ից Հռոմի Պապ/, ում ժամանակներից սկսվեց ավերը, վերացումը, վերափոխումը աշխարհիկ ամեն ինչի փիլիսոփայություն, կրոթություն, ամսիկ գրականություն, հուշարձաններ... և պահպանված ծառայեցվեց նոր կրոնին:

Եկեղեցին սկզբունքը ընդունեց և յուրովի «խմբագրեց» եղածը, այն հարմարեցրեց նոր հոգևոր գաղափարախոսությանը: Ավելի ուշ Թոմա Աքվինացին /1227-1274 թթ./ այնպես «Վերանայեց - վերափոխեց» Արիստոտելին, որ նա դարձավ կարողիկ Եկեղեցու ամենահավատարիմ պաշտպանը. այլ կերպ «քրիստոնեացվեց»: Մրափ մտածողներն առարկում էին, լավ կլիմեր Արիստոտելին չքարգմանեին, նա կորցնում է իր դեմքը /Ռոշեր Բեկոն. 1292-1294 թթ./ Այս ամենի եռթյուն-նպատակն էր «եթե դրանց մեջ պիտանի բան գտնեք, կյուրացնենք, կիրագործենք... եթե վտանգավոր բանի հանդիպենք, ամենասուր դանակով

կքերենք, կկտրենք ու կնետենք»... և այսպես... «քերում-կտրում» էին, այդում գործեր...

Մի փոքր շեղում. և դա նորություն չեր. անցյալում և հետո էլ շատ անգամներ «անհնազանդ» գործերը խարույկի են հանվել...

ԱՍԱԲԱՎՈՐՎԱՀ /-500-428 թթ./ «Աստվածների մասին» գիրքը, ուր հիմնավորում էր բանականությունը, անտեսելով աստվածների դերը, հրապարակորեր այրեցին ազրորում...

Ալեքսանդրյան հարուստ գրադարանի /3-րդ դարակաքրիմ մ.թ.ա./ գործի մի մասը, որոշ չափով միտունավոր, ոչնչացվեց 47 թ. /մ.թ.ա./ պատերազմի, ապա 273 թ. ապստամբության ժամանակ. Վերջին գործը այրեցին 642 թ. Օմար Խալիֆի վայրագությունների ժամանակ, դեկավարվելով «այն ինչ մեզ պետք է, Դուրանում կա, մնացյալը ավելորդ է» սկզբունքով:

1160 թ. Բաղդադի Խալիֆը այրել է տալիս Ավիշեննայի /Աբու Ալի իր Սինա-980-1037 թթ/ գործերը:

Չորմեացից /մինչև քրիստոնեության ընդունումը / այրել են հրեաների և քրիստոնեաների, հրեաները հեթանոսների և քրիստոնեաների, Վերջինները հրեաների, հեթանոսների, հեթետիկոսների գործերը:

Գրանադայի գրավման ժամանակ հիմք հազար Դուրան կրակի տվին...

Մեր օրերում էլ շատ գործեր և նյուրական մշակույթի հուշարձաններ են այրում, ավերում պատմությունը կեղծելու նկատառումներով...

Ավետիս Ահարոնյանի դիպուկ բնորոշմանը «Կրոնն ու ուժը ընթանում են ձեռք-ձեռքի տված»... ապա քրիստոնեությունն «Աշխարհային վայելքների տեղ խոստացավ հավիտենական երջանկություն. մարմինն... ընկավ... հոգու ոտների տակ... երկնային երևակայական գեղեցկությունը բռնեց իրականի, առարկայականի տեղը... և մարդկությունը... սողաց դարեր, մինչև վրա հասավ վերածնունդը»:

Դպրոց, դաստիարակություն.

Կրթական համակարգում դաստիարակության բնույթը, ձևը, ոգին, բովանդակությունը գուտ հոգևոր էր, ծառայեցված քրիստոնեական վարդապետությանը, աշխարհիկ ամեն ինչ անտեսված էր:

Գործում էին հետևյալ կարգի /տեսակ, ձև/ դպրոցներ, ուր գերիշխում էր հոգևոր միտքը:

Ծխական - /3-4 տարի/ տարրական, ամցնում էին գրել, կարդալ, հաշիվ, կրոն, գործում էին հիմնականում Եկեղեցիներին կից, բացառիկ դեպքերում մասնավոր:

Թեմական - /9-10 տարի/ տարրի, ներառյալ ծխականը/. միջնակարգի մակար-

դակի, խոշոր բնակավայրերում, որոշ չափով կյանքին մոտ, աննկատ աշխարհիկ...

Վանական - /9-10 տարի, ներառյալ ծխականը: Վանքերին կից, հիմնականում գիշերօրիկ, միջնակարգի մակարդակի, ավելի խորը հոգևոր ուղղվածությամբ, հիմնական նպատակադրումը հոգևոր դասի պատրաստում:

Թեմական և վանական դպրոցներում անցնելիք առարկաները հիմնականում յոթ ազատ արվեստ-գիտություններն էն, միայն դիալեկտիկա-փիլիսոփայության փոխարեն՝ աստվածաբարանություն:

Դպրոցներում /հատկանելի ծխական/ չկար որոշակի ուսումնական տարի, դաս-դասարանային համակարգ, անցնելիք առարկաների որոշակիություն, իշխում էր անիմաստ սերտումը. սովորողների ինքնուրույություն դրսելումների սահմանափակում, ճնշում, արգելք-պատիժներ, նվաստացում, ծեծ...

Ուսուցման լեզուն /հիմնականում/ լատիներենն էր... դարեր շարունակ որպես լատիներենի ուսուցման ծեռնարկ- դասագիրը օգտագործվել է հռոմեացի բանասեր, քերական, հետոր Էլեն Ռոնատոսի /IV դար/ «Քերականության արվեստ» /«Ars grammatica»/ գիրքը:

Գրքի լեզուն էլ ողջ միջնադարում /Եվրոպա/ հիմնականում լատիներենն էր:

Դպրոցում /և ողջ կյանքում/ իշխում էին.

ԴՊԱՍՏԻՉՅԱ.

Անփոփոխ դրույթների, քարացած գիտելիքների անառարկելի ընդունում, անքննադասելիություն: «Կուրորեն հավատա այն ամենին, ինչ քեզ ասելու են ճեմարանում» /Մտենդալ/. «Սովորեցնում են, որ եցս-ը ծի է... բայց... գգուշանում են... ասել, թե ինչ բան է ծին» /Մտենդալ/. «Երեխան ուզում է իմանալ, թե ինչու են ասում «Ճիմար է խցանի պես», իսկ դպրոցը պատասխանում է՝ «Խցանը գոյական անուն է». /Ցանուշ Կորչակ/:

ՄԵՐԼԱՍՏԻԿԱ /աստվածաբարանության աղախին/. անպտուի մտավարժանքներ, անորոշակիություն, ձևական, անիրական գիտելիքներ. հետևաբար «Սերտել և ոչ դատել»... հաճախ ձգտում հաշտեցնելու գիտությունն ու կրոնը...

ՖՈՐՄԱՍԻՀԱՄ /Ձևապաշտություն/, ձևի անջատում բովանդակությունից /երեխն հակադրում/, տեսականը գործնականից. ձևի /արտաքինի/ պաշտամունք... նախասիրությունը տալ օրենքի տառին և ոչ բովանդակությանը...

Ահա ողջ ուսուցում-դաստիարակությունը ստրկամտորեն ենթակա էր այս «Եռյակ պահանջ-թելադրանքներին»:

Այսպես էր կրթական համակարգում, բայց աշխարհիկ կյանքը լրիվ անտեսված չէր, դրան ապացույց

Ասպետական դաստիարակությունը նախատեսված աշխարհիկ ազնվականության համար. դրա բովանդակությունը ներառված էր «ասպետական յոթն առաջինությունների» մեջ. դրանք էին ծիավարություն, լող, նիզակ, սուսեր-սուսերամարտ, որսորդություն, շաշկի-շախմատ խաղալ, սերենադներ հորինել-երգել... մտավոր, անգամ գրագիտությունը սկզբնական շրջանում իսպառ բացակայում էր, հետագայում որոշ չափով կիրառում ուներ:

7-14 արեկան. Վերնախավին վայել բարոյա-ազնվականական դաստիարակություն... հաճախ որպես մանկավիկ, սպասյակ, սպասավոր... ծառայելով վերիններին:

14-21 տարեկան. Ասպետական յոթն առաջինություններ, ուզմա-ֆիզիկական այլաբնույթ վարժանքներ:

20-21 տարեկան. Դատուկ ասպետական ստուգում-քննություններից հետո, որոնց բովանդակությունը և ծները գուտ ռազմա-ֆիզիկական էին, երիտասարդը ստանում է ազատ ասպետի կոչում, որով և որոշակի հանդիսավորությանը ավարտվում է կրթա-դաստիարական երկարամյա ժամանակաշրջանը:

Աշխատավոր դասի /գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ.../ դաստիարակությունը, եթե դպրոցից դուրս էր, գուտ աշխատանքային էր:

10-11-րդ դարերում որոշ դրական քայլեր են նկատվում աշխարհիկ կյանքում. քաղաքները գգալի վերներաց են ապուում, մանութակտուրան տեղաշարժում է տնտեսությունը, այդ ամենը նպաստում է մշակույթի, դպրոցի աշխուժացմանը. և գրեթե աննկատ, աշխարհականացմանը:

Այդ ամենում կարևոր էր նաև Արևելքի /Իրան, Բյուզանդիա... հայեր, պարսիկներ, արաբներ.../ մշակույթի ազեցությունը Եվրոպայի վրա... գուգակցված փոխազդեցությամբ:

Առևտրա-արհեստագործական քաղաքներում 11-րդ դարի 30-40-ական թթ. հիմնվեցին որոշ չափով կյանքին ավելի մոտ կանգնած, գգուշորեն նշենք աշխարհիկի տարրեր ունեցող հաճքարական /հաճքար-արհեստավոր/ և գիլդիական /գիլդի-առևտրական/ դպրոցներ, որոնք տալիս էին ընդհանուր կրթություն, 6-8 տարիների կրթություն:

¹ Արարական /հնկական/ թվեր 0,1,2,...9 Եվրոպա «մուտք գործեցին» և սկսեցին կիրառել 820-ական թվականներից:

Ավելի ուշ բացվում են նաև որոշակի նպատակային ուղղվածությամբ /թեքումով/, փոքր վերապահումով, մասնագիտական կրթական միջնակարգ հաստատություններ՝ բժշկագիտական, իրավագիտական դպրոցներ. դրանցում ընդհանուր ուսուցմանն զուգահեռ ստանում էին նշված ուղղություններին համապատասխան կորություն:

Այս ամենը աշխարհիկ մտքի նոր /և անհրաժեշտ/ պահանջ-թելադրանքն էր: Դպրոցը կյանքից հետ մնալ չեր կարող:

Այսպիսով, նման ուսումնական հաստատությունները, որոց չափով, թեկուզ և միջին /միջնակարգին մոտ, երեխն հավասար/ մակարդակի աշխարհիկ ուղղորդված մասնագիտական կորություն էին ապահովում... բայց գացավում էր դրա ել ավելի խորացման կարևորություն-անհրաժեշտությունը:

Այդ պահանջի իրագործումը շնորհված էր ժամանակի չափանիշներով բարձրագույն-համալսարանական կորությունը:

Միջնաբերդ Համալսարանը. Universitas litterarum - գիտությունների միակցում. Եվրոպական առաջին երկու համալսարանները¹ գործել սկսել են 1158 թ., երբ Բոլոնիայի իրավագիտական և Սալերնոյի² բժշկագիտական դպրոցները վերափոխվեցին բարձրագույնի: Դրանց հաջորդեցին Օքսֆորդի /1187 թ./, Քեմբրիջի /1209 թ./, Լիսաբոնի /1209 թ./, Սորբոնի /1215 թ./ Պադուայի /1222 թ./, Սոնդեյի /1289 թ./, Պրահայի /1347 թ./, Կրակովի /1364 թ./, Վիեննայի /1365 թ./, Շայելեբերգի /1386 թ./ ... և տասնյակներով այլ բարձրագույն դպրոցներ:

Համալսարաններն ունեին /իմբանականում/ հետևյալ կառուցվածքը. մեկ-նախապատրաստական արվեստից /արտիստական/ բաժին և երեք ֆակուլտետ՝ բժշկական, իրավագիտական, աստվածաբանական, բույրում ուսման տևողությունը 5-6-7 տարի. նախապատրաստականից հետո ընդունվում էին ցանկացած ֆակուլտետոր:

Նախապատրաստականում անցնում էին եռուղին /քակալավի/, ապա՝ քառուղին /արվեստի մագիստրոս/:

Բժշկագիտականում - ճշգրիտ, բնագիտական գիտություններ, բժշկագիտություն, դեղագործություն:

Իրավաբանականում - օրենք, իրավունք, իրավագիտություն, այլ և այլ հումանիտար գիտություններ:

¹ Որոշ վերապահումներով աշխարհի ամենահինգ համարվում է Ֆեն քաղաքի /Մարոկո/ համալսարանը, հիմնադրված 859 թ.:

² Հիշատակումներ կամ նույնիսկ 9-րդ դարից:

Աստվածաբանականում – կրոնա-քարոյա-աստվածաբանական ուղղվածություն, որոց հումանիտար թեքումներ...

Համալսարաններն ունեին շենք, լաբորատորիաներ, կաբինետներ, լաբորատորիաներ, գրադարան... ռեկտոր, ֆակուլտետ, դեկան, ամբիոն... ուսումնական գործընթացը կազմակերպվում էր դասախոսություններով. սեմինար - գործնական պարագմունքներով. անձնական հաճանակականներով, գործի վրա աշխատանքով, բանավեճերով... հարցում-քննություններով և այլ ու այլ մեթոդներով:

Միջնաբերդ

Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր, փիլիսոփա, բնագետ Ռոջեր Բեկոնը /- 1214-1292 թթ/ ընդգծված կարևորում էր գիտափորձ / Եվրոպայում առաջինը/. հաճախ փակում էր աշխատասենյակում և գործնականում կիրառում, ստուգում, հանողվում... փորձով ստուգում տեսականի ծշմարտացիությունը: Ունաճ, նույնիսկ, խոսում էին, որ նա «գործ ունի դևերի հետ»:

Բոլոնիայի համալսարանում 1300-1320 -ական թթ. դասախոսել է գեղեցկուի և նովիլլան /վարագույի ետևից/:

Սորբոնի համալսարանում 1330-1340-ական թթ. Եվրոպայի տարբեր երկրներից ստվորում էին շուրջ 15000 ուսանող:

Սալերնոյի համալսարանում 1309 թ. հիմնվեց Բուսաբանական այգի նաև դեղագործության մեջառումներով:

Պադուայի համալսարանում 1341 թ. /և հետո ել/ դիահերձում:

1684 թ. Լուկունցիա Պիսկալիան ստանում է փիլիսոփայության դոկտորի աստիճան. աշխարհում առաջին կին դոկտորը.

Վերսածնունդ

Եվրոպական վերածնունդ /renaissance/ /սկզբնավորվեց հտակայում բուռն հետաքրքրությամբ անտիկ մշակույթի, գրականության, արվեստի... նկատմամբ: Այն իր առաջին քայլերն արեց գրականության, ապա արվեստի քանդակի, գեղանկարչության ասպարեզում: Հումանիզմ, մարդկայնություն, մարդասիրություն.../

Առաջին խոշոր ներկայացուցիչներն են.

Գրականություն

ԴԱՄԹ ԱԼԻԳԻԵՐԻ /1265-1321 թթ./ «Աստվածային կատակերգություն» /Ոժողք, Քավարան, Դրախտ/, Եռերգություն /ձոնված Բեատրիչեին/:

ՊԵՏՐԱՐԿԱ ՖԱՐՆՉԵՍԿՈ /1304-1374 թթ./ «Սոնետներ», նվիրված
Լաւրյախին:

ԲՈԿԱՉՅՈ ԶՈՎԱՆԻ /1313-1375 թթ./ «Դեկամերոն» միջնադար-
յան սահմանափակ տաղտուկ կյանքի ծաղրանք- քննադատություն:

ՄՐԿԵՏԸ

ԵՇՈՆԱՐԴՈ ԴԱ ԿԻՆՉԻ /1452-1519/. «Աստվածամայրը քարանձա-
վում», ճարտարապետական- շինարարական կառուցներ...

ՄԻՔԵԼԵՆՁԵԼՈ ԲՈՒՆԱՐՈՏԻ /1475-1564թթ./ «Քրիստոսը և Տիրա-
մայրո», «Բաքոս», «Դավիթ»...

ՈԱԺԱՅԵԼ /ՈԱԺԱՅԵԼԼՈ/ ՍՍՆՏԻ /ՍՍՆՑԻՈ/ /1483-1520 թթ./ «Մա-
րիամի նշանադրությունը», «Ասպետի երազը», Գրանդուկայի Տիրամայ-
րը », «Տիրամայրը կանաչների մեջ», «Գեղեցիկ այգեպանուիին»...

Մտքի, բովանդակության / նաև ձևի/ այս շրջադարձային վերափո-
խումը գուգակցված և պայմանավորված է XIV- XV- XVI դարերի մեջ
գյուտեր-հայտնագործություններով:

- Եվրոպան ակնոցին ծանոթացավ Ուզեր Բեկոնի /1814-1292 թթ./
շնորհիվ: /Չինաստանում - V դար թ.ա./:

- կատարելագործված կողմնացույց. իտալացի Ֆլավիո Չոյյա
1302 թ. /Չինաստանում - 2 հազար տարի առաջ/:

- Գրիգ տպագրություն- Յոհան Գուտենբերգ /- մոտ 1448 թ.:/:
- Գրպանի ժամացույց -1504 թ. Սյուրինմերգայն փականագործ

Յենլայն, մեխանիկական ժամացույցը 578 թ. / ? /, ոնանք IX դարում,
Պացիֆիկոս Վերոնացի, ոնանք X դ. - Կանական Յերբերտ. Չինաստա-
նում 725 թ.:

- Ինքնաշարժ ժախարակ - 1530 թ.
- Տիեզերական համակարգ - 1543 թ. Կոպերնիկոս

- Մարմինների անկման օրենքը -1590 թ. Գալիլեյ
- Մանրադիտակ - 1590 - Գալիլեյ
- Յեռադիտակ - 1600 - Գալիլեյ

Աշխարհագրական հայտնագործություններ.
- Ամերիկա - 1492 թ. Կոլոմբոս
- Աֆրիկայի շրջանավարկումը - 1498 թ. Կասկո դե Գամա:

¹ «.... և եթե Լաւրյան աճումանար Պետրարկայի հետ, վկա և Աստված, սոնետներն այս
գրել նա չէր կարող. » /Բայրոն/

ԴՊՐՈՑ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս վերածննդյան տեղաշարժ- վերելքին մասնակից էր և կրթա-
լուսավորական համակարգը, դպրոցը ետ մնալ չէր կարող և անվերա-
պահորեն արձագանքեց ու նպաստեց ամեն դրականի հաստատմանն
ու առաջընթացին: XV- XVI դարերում հանդես եկան ականավոր հումա-
նիստ գործիչներ, որոնք գգալի ծառայություններ մատուցեցին նոր դպ-
րոցին ու նպաստեցին նանկավարժական մտքի առաջընթացին:

ԿԻՏՈՐԻՆՈ/ՈՈՍՐՈՒՄԱՍՈՒ/ ԴԱ ՖԵԼՏՐԵ/1378-1446/:

Սանտուայի կառավարիչ Ֆրանչեզէ Գոնզագան իր զավակների
դաստիարակության համար հրավիրում է «ամեն մարդասիրության
հայր» դա Ֆելտրէին. Վերջինս իր պայմաններն է առաջադրում դպրո-
ցի համար հատկացնել շենք, ներգրավել այլ երեխանների ևս, չմիջամ-
տել իր կրթա- դաստիարակչական գործունեությանը. համաձայնու-
թյան են գալիս և «նոր տիպի դպրոցական առաջնությունը» հիմնում
է իր «խնդրության տուն» դպրոցը...

Շուրջ 50 /երեմն ավելի/ երեխա, 8-12 տարեկան, նաև աղջիկներ
կատարյալ ազատության մեջ՝ անկասկած որոշակի պայմանների
պահպանմամբ. Երեխան ուշադրության կենտրոնում. ապահոված էր
համակողմանի դաստիարակությունը, որոց չափով ընդգծված էր ֆիզի-
կականը, հոգևորը /կրոն/ գգալի էր. ոչ մի պատիժ, հարգանք ու սեր
փոքրիկների նկատմամբ:

ԷՐՍՃ ՈՈՏԵՐՂԱՍՑԻ/1465 -7-1536/ «Գովք հիմարության»/ գր-
վել է 1509-ին, հրատարակվել 1511 թ-ին/ տպարանից դուրս չեկած
ինկվիզիցիան այրեց, ծաղուալից քննադատություն միջնադարյան
ճահճացած կյանքի դպրոցի, դաստիարակության, խավար, տգիտու-
թյուն, մտքի կաշկանդում. նշում վերափոխման ուղիները:

Ազատ դաստիարակության մասին առաջինն է, որ հատուկ արտա-
հայտվել է որոշ վերապահումով հիմնավորել է այն:

ՖՐԱՆՍՈՒ ՈՈՐԼԵՆ /1493/94 -1553 թթ./ ուշագրավ է «Գարգան-
տյուա և Պանտագրուել» գիրքը, որի տարբեր մասերը տարբեր խո-
րագրերով հրատարակվել են 1532, 34, 46, 52 թվականներին:

Գրքում սպանիչ ծաղրի է Ենթարկում իինը, միջնադարյանը, ի դեմս
առաջին ուսուցչի Տուբալ Օլոֆերնի, որը տարիներ «ուսուցանում է» և
ոչինչ չի սովորեցնում և գովերգում Վերածննդյանը, ի դեմս Երկրորդ ու-
սուցիչ Պոնոկրատի /անխոնց, ուժեղ/, որը ամիսներ անց ավելի է տա-
լիս- ուսուցանում, եթե նախորդը տարիներով ոչինչ չէր սովորեցրել:

Դրանով բացահայտում է իին /միջնադարյան/ դպրոցի անպտուղ, անբովանդակ մտավարժանքները և նորի կրթիչ-դաստիարակիչ արժանիքները, որը ճշմարիտ գիտության գովեն է : Սովորեցեք գործել, միշտ առաջ նայեք, հասկացեք կյանքը... Սահիվան անկողնում Ռարլեի վերջին խոսքը «փակեք վարագույները. կատակերգություն ավարտվեց»:

ՄԻԾԵԼ ՄՈՆԹԵՆ /1533-1592 թթ./ «Փորձեր» / /1580-88 թթ./ Եռահատոր աշխատությունը փիլիսոփայական մտածելակերպով վերլուծում է և քննադատում իինը և ներկայացնում նորն իր վերափոխիչ արժեքներով: Ժանանակին ընտրվել է իր հարազատ Բորդը քաղաքի քաղաքապետ:

ՈԵՖՈՐՄԱՑԻԱ /reformatio - վերափոխում/:

ՄԱՐՏԻՆ ԼՅՈՒԹԵՐ /1483-1546 թթ./: Նոր մտածելակերպ. իր բնորշմամբ՝ «կանգնած են դրա վրա և այլ կերպ չեն կարող» . Վերանայել, վերափոխել, հասկանալ կյանքի իմաստը. « ծիսակա- տարության փոխարեն համոզմունքներ» . այս իմաստային ճշմարտությունը ոչ միշտ արդարացրեց իրեն և կյանքում «ծիսակատարությունների ստրկությունը փոխվեց համոզմունքների ստրկության» / Մարքս/:

ՄԱՐԻՊՈՍ ՅԵՍՏԵՆ /1486-1535 թթ./ Գերմանացի հումանիստ. սխոլաստիզմի, կեղծ աստվածապաշտության դեմ. միաժամանակ պայքարում էր կաթոլիզմի դեմ. Յօնմի պապին որակում է որպես «բոլոր արաւտներով քողարկված բանդիտ»: Կողմ էր դպրոցի, կրթության, լուսավորության բարեփոխումների:

ՉՊՐՈՑ. Իշխում էր լատիներենը, լատինական դպրոցը... յուրովի արդարացված էր, քանզի լատիներենը փաստորեն «Եվրոպայի լեզուն էր»:

Կաթոլիզմի հենարան ճիզվիտների /հիմն.1534 թ./ գործունեությունը զարգացման, առաջընթացի սահմանափակում-արգելք էր: Նրանց հավատանքն էր «աշխարհ մտեք որպես հեզ գառնուկներ, այնտեղ գործեք որպես կատաղի գայլեր և երբ ծեզ շան պես կիալածեն, կարողացեք օծի պես սողալ» /Լոյոլա հգնատիոս-1491-1556 թթ. 1534թ. հիմնադրված «Յիսուսի ընկերություն», այլ կերպ «ճիզվիտների օրդեն»/հիմնադրի/: Նույն միտքն այլ մեկնաբանությամբ մեղքը լեզվին... կաթը խոսքով... մաղձը սրտում... խարկանքը գործում... իմաստը իմկվիզիա- հավատաքննություն, ԿГԲ, ՊԱԿ:

Լութերի ռեֆորմացիան /1517 թ./ դեմ էր կաթոլիզմին, արդյուն-

քը ճկատելի չէր: Մյունցերի ապստամբությունը /1525 թ./ «անարդյունք... հետևանքը հակասություն, հակամարտություն... կամքն օրենքն է հակառակ կողմից» /Մ.Լյութեր/:

Դպրոցն աստիճանաբար անցնում է ճիզվիտների տնօրինությանը. լիկ տիրապետում էր կրոնական բարոյագիտությունը. դրա հմաստն էր «վարժեցնել մարդկանց, ուշադրություն չդարձնել ցերեկից ավելի պարզ բաների» /Ստենդալ/: Բայց նշենք, որ ուներ և որոշ դրական դրսելումներ /կարծում ենք որպես գրավչամիջոց/ . դպրոցը /շատ դեպքերում/ գիշերօթիկ էր, ուներ բավարար պայմաններ... բովանդակությունը յոթն ազատ արվեստներ, աստվածաբանություն, հին լեզուներ, անգամ ֆիզիկական դաստիարակություն. դրական – ընդունելի մերողներ... դրանով իսկ նկատելի էր նահանջը միջնադարյան սրոլաստիկ ուսուցումից:

ՄՈՅԻՍԵ- ՈՒՏՈՊԻՃՄ. utopia = u + topos. u - ն (ոչ), topos - տեղ, վայր – որը գոյություն չունի:

Ուտոպիստական մտածելակերպը նորություն չէ. նաման գաղափարափոխություն կա և Պլատոնի մոտ, սակայն այն հիմնականում սկզբանվորվեց 16-րդ դարասկզբին:

ԹՈՍՍՍ ՄՈՐ /1478-1535 թթ./ «Ուտոպիա»-ն լույս է տեսել 1516 թ. լատի- ներեն, անգլերեն բարգմանվել է 1551 թ.: «Յողերի ցանկապատում» ... «ոչխարները կերան մաղովկանց...»

Թոմաս Մորի Ուտոպիա երկիրը մի մեծ ընտանիք է... ազատություն, հավասարություն, արդարություն, հանրային սեփականություն, գիտական համոզմունքներ... փնտրել / և գտնել / երջանկություն, աշխատանք, ազնվություն, վեհանձնություն... կատարելություն...

Մոտավոր նամանությամբ մոտ երկուսուկես դար հետո 1759 թ. Վոլտերն իր «Կանդիտ կամ լավատեսություն» գործում հերսոնին՝ Կանդիտին / մաքրասեր, միամիտ/ դայակ-դաստիարակ Պանզիոսի ուղեկցությամբ «տանում է» հեքիաթային ելդորադո երկիրը, ուր ազատություն, առատություն, հոյակապ կառուցներ, գիտություն, կրթություն, զարգացում...

Սակայն, ճանապարհը դեպի այն քարքարոտ է, համարյա անանցնելի:

Մորի «Ուտոպիայում» դպրոց- դաստիարակություն բոլորին պար-

¹ Ընդհախոսի առարկությունը. «Այն պետությունը, որ սեփականության համայնացում կահճամի, բոլոր երկուներից ամենադժբախտը կլիմի:... Ամեն ճարդ կխոսափի աշխատանքից և իր գոյության հոգսերը կաշխատի դնել ուրիշների վրա»:

տադիր, անվճար, համակողմանի կրթություն, աշխատանքային ուսուցում, տեսականը՝ դպրոցում, գործնականը՝ դաշտում, արհեստանոցում. ֆիզիկական նաև ռազմական ուսուցում / նաև աղջիկներին / ... ուսուցումը նայրենի լեզվով...

ԴՈՒԻ ԱՍՏՈՆԻՌ ՖՐԱՍՉԵՍԿՈ / 1513-1574 թթ. / Գրող- հրապարակախոս, ուսուպիստ. «Աշխարհներ» / 1552-53 թթ./, «Մարմարյա աստիճաններ» / 1553 թ/. բողոք անհավասարության, ճնշման, անարդարության դեմ- հետևել է Թ. Մորին / «Ուսուպիան» թարգմանել և հրատարակել է իտալերեն / . քարոզում է նույն սկզբունքները, ինկվիզի-ցիան արգելեց «Աշխարհները»:

ԹՈՍՎՅՈ ԿԱՍՊԱՍԵԼԱՎ / աշխարհիկ անունը Զովանի Դոմինիգո. 1568-1639 թթ. / «Արկի քաղաքը» գրել է 1602 թ-ին, ինքը թարգմանել է լատիներեն 1613 թ-ին, լույս է տեսել 1623 թ-ին, ըստ հեղինակի այդ հիեալական Արկի քաղաքում մի տարում ավելի մեծ հաջողության են հասնում, քան այլ տեղ 15 տարում:

Հեղափոխական Կամպանելլան շատ է տառապել, կյանքի 2/5 -ը անցկացրել է բանտերում, քանզի պայքարել է «Իտալիան վայելող սրիկաների և պորտարույժների» դեմ... Լուսավորության հարցերում հիմնականում առաջադրում է նույնարնույք / Թ. Մոր / լուծումներ. զնական ուսուցման ջատագով. «Այն ամենը, ինչ հարկավոր է ուսումնասիրության համար, պետք է ներկայացնել նկարներով և բացարձական մակագրություններով»: Ընդունում է երեք կառավարող սկզբունք. հզորություն / պահապանել անդորրը, ինաստություն / ղեկավարել ինելամտորեն/, սեր / ապրել -գոյատեև համերաշխորեն/:

Նման առաջադիմական մտքերը, գործերը հանգիստ, ճանապարհարթել չեն կարող. ինկվիզիցիան / հավատաքննություն / , որը սկզբնավորվել է 1232 թ. և ավելի «կատարելագործվել» Սիրտոս պապի / 1414-1484 թթ. / կողմից ու որոշվել իսպանական: Այն «հերոսացավ» իր դաժան գործունեությամբ:

ՀԱՎԱՏԱՔՆՈՒԹՅՈՒՆ - ինկվիզիցիայի «հերոսական» գործերից.

ՍԱԿՈՆԱԼՈՐՍ ՁԻՐՈՒԱՍՈ / 1452-1498 թթ. / Մաքսիմ Գրեկի ուսուցիչն ու մտերիմը, Պապականության հակառակորդ, Ֆլորենցիացի քարենորդիչ, ժողովրդին ոտքի համեց / 1494 /, հաստատեց համրապետություն, մեքնայություններով, խարդախությամբ տապալեցին և մայսի 23-ին խարույկի հանեցին:

ՄԻԳԵԼ ՍԵՐՎԵՏԻՆ / իսպանացի, 1509/11-1553 /. արյան շրջանառության հիմնավորում, հաստատում, աստծո եռակիության մերժում, իր գոքերի հետ խարույկի հանեցին 27.10.1553 թ.:

ՃԵԿԿՈ Դ.Ա.ՍԿՈԼԻՆՆ ԽԱՐՈՒՅԿԻ / երկրի գնդածնության պնդման համար:

- ԲԵՐՆԱՐԴԻՆ ՏԵԼԵԶԻՈ / 1509-1588 թթ. / բնագետ- բժիշկ, ճեմարան-ակադեմիայի հիմնադիր, Յոռմի պապը փակել է տալիս ճեմարանը, սրամիտ հայացքների համար կորեցին լեզուն:

- Ճատեցին ԹՈՍՍՍ ՄՈՐԵ ՃԵՆՐԵՐՈ, հետո գլխատեցին:

- ՋՈՐՋԱՆ ԲՐՈՒՆՈ / 1548-1600 / 1593-ին բանտարկում են 7 տարի, չարչարում... և այրում Յոռմում:

- Միշտ հայիոյել ու հալածել են ՆԻԿՈԼՈ ՄԱՐԻԱԿԵԼԻՆ / 1469-1527/ աքսորել, տանջել...

- ԳԱԼԻԼԵՅՆ ՏԱՐԱՎԱԿԱՆՔՆԵՐԸ / «Քայց և այնպես պտտվում է»/:

Եվ այսպես ինկվիզիցիան, դատավճիր էր արձակում և իրագործում... Յորդատությունը, ողջակիզումը գլխավորապես հրապարակային, իրականացվում էր XIII դարասկզբից. Լայն տարածում ստացավ XV դարավերջից. 1481-1808 թթ. 327 տարում հրադատվել են մոտ 35000 մարդ... Վերջինը՝ 1826 թ. Կալենսիայում:

ԱՐԵՎԱՏԱ -ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ XVII- XVIII դդ.

ՖՐԱՆՍԻԱ. 16-17 դարերում - Տարրական դպրոցական ցանցի բարար ընդլայնում / հիմնականում եկեղեցիական/:

1635 թ. Ֆրանսիական գիտությունների ակադեմիայի հիմնադրումը, դրամում զգալի էր Արման Ոչչենի երեր / 1585-1642 թթ/. այդ տարիներին վերակառուցվում է նաև Սորբոնի համալսարանը:

1665 թ. հրատարակվում է գիտական առաջին համեստը:

Նորից գլուխ են բարձրացնում զանազան աղանդեր.

Համանականները / Իպսի Եպիսկոպոս Համան / 1660-70 -ական թվականներին բացում են տասնյակներով դպրոցներ / 5-6 հոգանոց դասարաններ /, ուսուցումը՝ մայրենի լեզվով / չմոռանանք, որ իշխողը լատիներենն էր, ուշադիր, սիրալիր վերաբերմունք, բայց խիստ հսկողություն, հակառակում էր. ճիզվիտներին, որոնք հալածում էին ու փակում այդ դպրոցները. իշխանությունները ևս հալածում էին իբր միապետության հակառակորդների...

Քրիստոնեական դպրոցի եղբայրների միություն, կաթոլիկ, մեծ թվով տարրական դպրոցներ են բացվում, ուսումը լատիներեն և մայրենի լեզվով, ունեին նեղ ընդգրկում, դասային էր:

Ուսուցչական կադրեր պատրաստելու նկատառումներով 1684 թ. բացվեց առաջին ուսուցչական ճեմարանը / հետագայում և՛ շատերի համար ուսուցումն անվճար էր:

1680-ական թվականներից օգալի տեղաշարժ նկատվեց նաև միջնակարգ կրթության բնագավառում և ընդհանուր, և օգալիորեն ռեալական ուղղությունում:

ԱՍԳՐԻԱ. Իիմնականում տարրական- Եկեղեցիական դպրոցներ, ոչ շատ, բայց և մասնավոր: 1688 թ-ից իեղափոխական շարժումների շնորհիվ նկատելի է աշխուժացում. կրթության ուղղվածությունը և դասական, և ռեալական, բոլոր աստիճաններում վճարովի: Դաճախ զգացնել էր տալիս պահպանողականությունը՝ զուգակցված կլասիֆիզմին: Որոշ չափով տեղ ուներ ֆիզիկական դաստիարակությունը, արծարձվում էին նաև աշխատանքային դաստիարակության գաղափարներ. «Աշխատանքը բերում է առատություն, ովք չի աշխատում, նա չի ուսում» / Զոն Բելիսո – 1654-1725 թթ/, նույն մոտեցումն ուներ և Բելերսի նախորդ Վիյամ Պետտին /1623-1687/: Արտաքնապես հասարակական, կոլեկտիվ դաստիարակչական աշխատանք, զանազան արեւետներ...

Նման մոտեցումներով ձգտում էին դպրոցը, թեկուզ և վերապահումներով մերձեցնել կյանքին, որոշ ժողովրդայնություն հաղորդել դպրոցին:

ԳԵՐՄԱՆԻԱ. Դպրոցը իիմնականում պետական, մայրենի լեզվով, վճարովի, դաստիարակության, կրթության երթյունը, բովանդակությունը որոշ վերապահումներով ազգապաշտական... հոգևոր բնութիւններում կարգապահություն... հսկողություն... մարմնական պատիժներ, արգելք- սահմանափակումներ:

ԱՎԳՈՒՍՏ ՖՐԱՆԿԵ / XVII դ. II կես - XVIII դ. սկ./ Հալլեում չքավորների համար բացում է անվճար դպրոց, հետագայում ուրիշներ ևս նման ձեռնարկումներ են անում:

Գործում էին և լատինական դպրոցներ... ուսուցչական ճեմարաններ... բացառիկ դեպքերում նաև ասպետական ճեմարան... Միջնակարգ դպրոցը իիմնականում դասական բովանդակությամբ, հոգևոր

բնույթի: Առևտրի, արդյունաբերության զարգացումը հանգեցնում է նաև ռեալական կրթության աստիճանական կազմակերպմանը / ռեալական դպրոցներ/: Լուսավորության բնագավառում Գերմանիան զիջում էր Ֆրանսիային ու Անգլիային:

Ընդհանրացմենք. արևմուտքում աստիճանաբար, բայց ոչ ոյուրությամբ հաղթանակում է ռեալական դպրոցն իր աշխարհիկ կրթության բովանդակությամբ. սա արդյունք էր տնտեսության զարգացման հրամայականի, նոր առաջադիմական աշխարհիկ մտքի հաստատուն քայլերի, այս ամենը կյանքի թելադրանքն էր:

XVII-XVIII դարերում իրապարակվում են կրթա- ուսուցողական- դաստիարակչական, բարոյական, բարոյակրթական, որոշ չափով բարոյագիտական / ժամանակի ընկալմամբ / գրքեր¹. այսպես.

1671 թ. Թեսավորությունը և աշխատանքը / համարական աշխատանքը / ժամանակի ընկալմամբ / գրքեր¹. այսպես:

Մարի Սեվինեյի / 1626-1696 / 1680-ականներին մայրական սիրով ու հոգատարությամբ դստերը գրած խրատական- բարոյախսական «Նամակները»:

1716 թ. Դամբուրգում- «Կանոններ՝ պատշաճ և հարգալիր գրույցի և կյանքի, բարձրաստիճան և ազնվական անձերի, քեզ հավասարի և կանանց հետ վարվելակերպի, ինչպես նաև կանանց գեղեցիկ վարվելամեր ուսուցանելու»:

1765 թ. Լայպցիգում «Ուսուցիչ կամ դաստիարակության ընդհանուր հիմունքները» / Երկու հատոր/:

1780 թ. Դամբուրգում Կամպեթի «Դոգեշահ ուսումն մանուկների համար»:

1791 թ. Տյուբինգենում Եիրմանի «Ամայայի հանգստի ժամերը» Երկու հատոր/:

1774 թ. Լոնդոնում - «Նամակներ իմ որդուն». հեղինակ՝ Լորդ Չեստերֆիլդ / 1694-1773/ քաղաքական գործիչ, գրող, դիվանագետ...

¹ Մինչ այդ էլ, անկասկած, եղել են այդպիսիք. «Վարվեցողություն սեղանի շուրջ»... իսպանացի Պետրոս Ավոնտոյի 1204 թ. կազմած «Կոերական կարգապահություն», հետագայում ևս, բայց հիմնականութ կորոնական ուղղվածությամբ, Երեմն որոշ աշխարհիկ դրսերումներով... Այսպես, Ուլիամ Լիլի / 1466-1522/ «Երգ բարեկրթության մասին» լատիներեն դիդակտիկ- ուսուցողական բանաստեղծությունը, առաջին տողը «Նա, ով իմ աշակերտն ե»: 1481 թ. Անտերդամում լատիներեն հրատարակվել է բարոյախսական, իրատա-ուսուցողական գրույցների մի ժողովածու, հետագայում շատ տարածում ստացած, ավելի ուշ բարգմանված այլ լեզուներով / նաև լեհերեն, որից 17-րդ դարի կեսերին հայերեն է բարգմանել Ստեփանոս Լեհացին/:

1752 թ. Չեստերֆիլդի առաջարկ- նախաձեռնությամբ Անգլիան անցավ նոր տարվա տոնակատարությամբ հունվարի 1-ին /մինչ այդ մարտի 25/: Գրքում արտացոլված էր XVIII դ. անգլիական ազնվականության կենցաղը. սա մի «օրենսգիրք» է բարձր խավերի սովորությունների, նիստու ու կացի իր որդուն խորհուրդների ձևով... կյանքի, աշխատանքի... ձգտումների հետաքրքրությունների մասին... « ամեն գործունեություն հասանելի է քեզ...միայն ակտիվություն, եռանդ, ջանափրություն... եղիր ուրիշներից խելացի ամեն ինչ կարող ես դառնալ » ... չի կարելի դառնալ միայն բանաստեղծ, « այդպիսին պետք է ծնվել ... »:

ՅԱՍ ԱՄՈՍ ԿՈՄԵՆՍԿԻ. 1592-1670. Ազգությամբ չեխ.«Բոհեմական եղբայրություն» աղանդի / քարոզում էին ունեցվածքի ընդհանրություն, սոցիալական իրավահավասարություն/ ականավոր դեմքերից. ընդեմ գերմանական ազնվականների և կաթոլիկականության, բայց ոչ կրոնի: Պանսոֆիստ. Պանթեստ- աստված բնության մեջ է:

Ստացել է լավ կրթություն. եղբայրական դպրոց-լատինական դպրոց Յերբոռնի Տենարան- Յայելբերգի համալսարան: 30-ամյա պատերազմի ժամանակ /1618-1648/. հալածանքներ, կորցնում է ընտանիքը, անցնում Լեհաստան /Լենչո 27 թ./. 1641-ին Լոնդոն, հետո Շվեյչիա, կառավարության հանճարարություններով աշխատում է դասագրեթի, լեզվի դասավանդման մեթոդիկայի և այլ դասագրեթի վրա: 1648 թվից նորից Լենչոյում գիտա- գրական, ուսուցչական աշխատանք:

1656 թ-ից Յանբուրգ, ապա Ամստերդամ, ուր և մահանում է:

Կրթա-դաստիարակչական համակարգի հիմքը բնահարմարություն: ճանաչել աշխարհը - «իմանալ, խոսել, գործել բոլորին սովորեցնել և ամեն ինչ» / իհարկե վերապահումներով/: Ամեն ինչում համակողմանիություն, համակարգվածություն:

Բեկոնյան փորձի տեսության կողմնակից /տես Յովիաննես իմաստաեր/.

Մարդ անհատի գովերգում, ինարավորությունների անսահմանություն.

ճանաչում-մտավոր կրթության.

Կառավարում / տես Յերբարու /- Դաստիարակություն, բարոյական ձգտումն առ աստված- հոգևոր դաստիարակություն:

Պարտադիր ուսուցում բոլորին, նաև աղջիկներին, նախնական / տար-դարկան/ ուսուցումը մայրենի լեզվով, ապա նոր անցնել լատիներենին:

Երեխաներին ըստ ընդունակությունների, ինարավորությունների, խելամտության և այլ հատկանիշների բաժանում է վեց խմբի, բոլորի նկատմամբ անհատական նոտեցում:

ա/ սրամիտ, հետաքրքրվող, ենթարկվող. գիտական գրադարանքի ընդունակ,

բ/ սրամիտ, լսող-դանդաղէկուտ-խթաննան կարիք կա,

գ/ սրամիտ, հետաքրքրվող, վայրենի, կամակոր, գգույշ մոտեցում,

դ/ ոչ այքան սրամիտ, թույլ ընդունակություններ, լսող, հետաքրքրվող.

ե/ ոչ այքան սրամիտ, թույլ ընդունակություններ, ենթարկվող , ծովյլ:

զ/ ոչ այնքան սրամիտ, կասկածելի ընդունակություններ...մնացյալը...

Ընդամենցումը մեկն է, բոլոր պետք է սովորեն /անկասկած մտավոր ինարավորությունների որոշակի սահմաններում/:

Կոմննսկին տախս է որոշակի տարիքային պարբերացում և դրան համապատասխան դպրոցական համակարգ. /Տե՛ս այսուսակ 3/:

ԴՐՈՅՑԱԿԱՆ ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ:

ԿՈՄԵՆՍԿՈՒ ԴԻՇԱԿԻԿԱՆ:

Դպրոցական որոշակի տարի, սկիզբ-ավարտ.

Դասարան /խումբ/ - դասաժամ, որոշակի համակարգ.

Երկկողմանի /կոլեկտիվ/ աշխատանք- ուսուցիչ-աշակերտ, գիտելիքներ, հարցում-ստուգում-գնահատում... վարժություններ:

Ուսուցման սկզբունքները, կանոններ. մանրամասն մեկնարանություններով.

Ուսուցիչը - կատարելություն, բոլոր բարեմասնություններով. գիտելիք, վարպետություն, կերպար... /ոչ ծիշտ մոտեցում - մեկ ուսուցիչը կարող է պարապել անգամ 300 աշակերտի հետ/:

Դպրոցի առանցքն ուսուցիչն է, ապա և կարգապահությունը. «Դպրոց առանց կարգապահության նման է ջրաղացը առանց ջրի»: Կարգապահությունը ուսումնական գործընթացի հիմքն է:

Կարևորում է բարոյական դաստիարակությունն իր բոլոր դրական կողմ-հատկանիշներով, բայց հոգևոր շաղախով: Ընդգծում է նաև ֆիզիկական դաստիարակության դերն ընդհանուր-համակողմանի դաստիարակության մեջ:

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մանկավարժական հիմնական առանցքային հարցերն ընդգրկող գործը «Մեծ Դիդակտիկան » է /1632/, դա մանկավարժության- դիդակտիկայի համընդհանուր վերլուծությունն է. վերն ասված ամեն ինչ ամ-

փոփոքած է այդ գրքում:

«Մայրական դպրոց» /1632/. Ընտանեկան դաստիարակության հարցեր:

«Համընդիանուր խորհուրդ մարդկանց գործերի կարգավորման» /1662, ուսուցա-բարոյախոսական - գործնական բովանդակությամբ նաև գործությունը»:

Առաջնահերթ մեծ կարևորություն է տալիս դասագրքին, օրինակ իր կազմած դասագրքերը.

«Ենուների և բոլոր գիտությունների բաց դուռը» /1631/:

Ենուների իմացություն, գիտությունների ուսուցման բացահայտում:

«Աստղագիտություն» /1632/, «Ֆիզիկա» /1633/:

Դատկապես անդրադառնանք «Զննական / տեսանելի/ աշխարհ նկարներով» գրքին /1658/:

«Orbis sensualium pictus» /լատ. «Դրաշագեղ աշխարհ»/:

Սա զննական սկզբունքով կազմված առաջին գիրքն է. էջի վրա նկարն է Կերը կամ աշ-ձախ կողմից/ ապա դրա նկարագրումը, մեկնարանումը, բացատրումը...Այդ գրքի մասին «Բացի Անոն Կոմենչիուսի գրքից երեխաների համար օգտակար ուրիշ ոչ մի կարդալու գիրք մեր ձեռքը ընկավ» /Գյոթե/:

Այսպիսով Կոմենսկին սկզբնավորեց մանկավարժությունը որպես առարկա... բայց ոչ գիտություն /մասնավոր կարծիք/:

Կոմենսկու «Մեծ Դիդակտիկա» գրքի կապակցությամբ փոքրիկ շեղում ... և շատ համառոտ Ռատկեի մասին :

ՈԱՏԿԵ /ՈՍՏԻՒ-ՌՒՄ/ ՎՈԼՖԳԱՆԳ /1571-1635 թթ./ 1612 թ. իր մոտեցում-տեսակետն է հայտնել ոեֆորմացիայի վերաբերյալ որոշակի գգուցությամբ - վերապահումներով, քննադատելով և հաճածայնվելով վերափոխումներին:

Իր մանկավարժական մտքերն շարադրված են «Փոքր Դիդակտիկա» /1616/, «Համընդիանուր ուսուցում Ռատկիսի սկզբունքով» /1619/ գործերում: Դրանք տառապում էին միակողմանիությամբ, տարրածում չտառապան: Արովանը Ռորպարտում ծանրացել է այդ գործերին:

Ուսուցման լայն հնարավորություններ, դպրոցական ցանցի ընդլայնում, բնահարմարություն, ուսուցումը մայրենի լեզվով, մատչելիություն, մասնակից - ընդհանուրը, ծանոթից - անծանոթը, հենվել ինդուկցիայի փորձի վրա, հաջորդականություն-համակարգվածություն, կրկնություն-վարժություններ, երեխայի հնարավորությունների հաշ-

վառում, ոչ մի ստիպմունք ... Եվ որպես նորություն-գրել-կարդալու մի-աժամանակյա սկզբունք / մեզ մոտ ավելի վաղ է դրվել այդ հարցը/:

ՉՈՆ ՀՈԿ /1632-1704 / Ֆ. Բեկոնի, /1561-1626 /, Թ. Շորսի /1588-1679/, մատերիալիստ, մենուալիստ փիլիսոփայական / նաև կրթա-լուսա-վորական / հայացքների հետմորոք և շարունակողոք: «Անգլիական հեղափոխության զավակ» / Ենգելս / Զ. Լոկի մտածելակերպի ազդեցությունը դպրոցի, կրթության, լուսավորության հարցերի խնդրում գգալի է:

Մեզ հետաքրքրող աշխատությունները.

«Փոքր մարդկային բանականության մասին» /1690/, կարևորվում է փորձի արժեքը / Ռ. Բեկոն, Ֆ. Բեկոն. հայ իրականության մեջ ավելի շուտ- Յովիաննես Սարկավագ. իմաստասեր/. արտաքին փորձ նաև /զուգակցված/ ներքին փորձ. կարևորում է հոգու ինքնուրույնությունը: Գրքում առաջին անգամ խոսում է «talesia rasa»- յի մասին, մաքուր-հարք- անգրել տախտակ. իմաստը երեխան ի ծնե / բնական-ժառանգական / ոչինչ չունի, չկա... դաստիարակությունն միակն է. ամենազոր, նրանից է կախված երեխայի ապագան»: Այս մոտեցումը դաստիարակության դերի գերազնահատում է, այդ կարծիքին էին նաև Յելվեցիոսը, Կոնդորուն, Բենը...

«Մտքեր դաստիարակության մասին » /1693 /. գուտ մանկավարժական բնույթի աշխատություն, լայն տարածում է ստացել. մինչև 1800 թ. ունեցել է 25 հրատարակություն, հայերեն լույս է տեսել XIX դարավերջի: Գործնական մարդու- շենտելմենի անհատական դաստիարակություն. երջանկություն և օգուտ:

Միջնադարյան դպրոցի դաստիարակության քննադատություն: Ռեալական կրթության ջատագով / սխալ չէ հիմնադիր համարելը . նաև փորձառական հոգեբանության/: բարոյական նոր / աշխարհիկ-բութուական մոտեցումներ/ սկզբունքներ. մարմնի և հոգու առողջություն և կատարելություն... պահանջելու կարգապահություն... բարոյական դաստիարակությունը գերծ կրոնի արտաքին ծևապաշտությունից... գերապատվությունը ընտանեկան դաստիարակության... կանք և բանականություն... ճանաչել մանկանը, հաշվառել անհատականությունը... դեկավարվել դաստիարակության ընդունելի մեթոդներով. դրա

¹ Միակերպ հասարակություն, չկա անհատ երեխայից ինչ ցանկանա կարող ես պատարել /«talesia rasa» «Լվացած մագաղաք», «Պոքի մաքրու է»/. Բոնակալների երազանքը է և համահունց երանց գործունեությամբ: Սայոյ նպասակն էր տեսնել իր ժողովրդին «պոչերը հավասար մկրատած» ստրուկ. - Սանկուրտ, այնպես ինչպես ժամանակին իրականացնել էր Ստալինը: Այլ կերպ կամ խարույկի հանել գնդակահարել, կամ «գործունել ջերմացնելու Սիրիոը»:

համար դաստիարակն օժտված պետք է լինի դրական /գեր/ հատկանշշներով: Դեմ էր մարմնական պատիժներին /բացառություն. կամակորության դեմ ապտակ/:

Գերգնահատելով դաստիարակությունը այն առաջնային է հաճարում, երկրորդ շարք մղելով կորություն –ուսուցումը, որի ժամանակինքնուրույնություն, հետաքրքրություններ, մատչելիություն, աշխատա-սիրություն... հաճախ խաղը զուգակցել ուսուցման հետ /տարիքին համապատասխան/:

Գրքի վերջին գլուխը /գրեթե մեկ քառորդը/ վերաբերում է Ֆիզիկական դաստիարակության կարևորությանը, իհմնավորնանը... խոսում է սմնդի, հագուստի, մաքրության, լոգամքի, խաղերի, վարժությունների «մարմնի կոփման, դժվարությունների հաղթահարման եղանակի նկատմամբ, դիմացկունություն / սկյուրացու և հռոմեացու վեճգորոյցը / ...»

Այսիսով Զ.Լոկը եղավ անգլիական և հատկապես շուրջ մեկ դար հետո ֆրանսիական հեղափոխական գաղափարների ներգործությամբ ձևավորվող նոր ժամանակների նորաշունչ մանկավարժության / նաև ֆիզիկական դաստիարակության տեսական հարցերի/ սկզբնավորողը:

ՖՐԱՆՍԻԱՑԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐ

ՇԵՆԻ ՌԻՉՐՈ /1713-1784/. մատերալիստ - փիլիսոփա, արթիստ, «Փիլիսոփայական մտքեր» /1746/, Լույս է տեսնում անմիջապես /հուլիսի 7-ին/ դաստապարտվում իրկիզման: «Նամակ կույրերի մասին ի խրատ տեսնողների » /1749/ գրքի համար բանտարկվում է ... Շատ գործերի, նաև գեղարվեստական /«Ընտանիքի հայրը», «Ապօրինի զավակը».../ հեղինակ է:

Սուր քննադատություն միջնադարյան մտածելակերպի: Դիրոյի «Պիդակետը...շատ բարձր է, իսկ տեսադաշտը շատ լայն» /Վ.Գյորե/:

Բարձր է գնահատում դաստիարակության դերը, բայց ոչ գերագնահատում... Կրրության համակարգը մոտեցնել ժողովրդին. դպրոցը պետականացնել /«հեռացնել» եկեղեցուց/, այն դարձնել հասանելի բոլորին /լայն բացել դպրոցի դրսերը/, լոիկ իրավահավասարություն, պարտադիր, անվճար ուսուցում... և այն ամեն դրականը, ինչը ժամանակին արծարծել են Մորը, Կոմպանելլան, Կոմենսկին...

ԿԼՈԴ ՅԵԼՎԵՑԻՆԻ /1715-1771/: Մատերիալիստ - փիլիսոփա, արթիստ. «Կարծիքներն են դեկավարում աշխարհը». այն պետք է վերափոխել:

Յին դպրոցի սուր քննադատություն:

«Մտքի մասին» /1759/ գիրքն արգելվեց ու խարույկի հանվեց: «Մարդու, նրա մոտավոր ընդունակությունների և նրա դաստիարակության մասին» /1773/ աշխատության մեջ զգալի է դաստիարակության դերի գերա-գանհատումը, դրանով իսկ ժխտելով բնածինը /նաև ժառանգականը/. ըստ նրա՝ բոլորն ունեն նույն, միանման կարողությունները:

Դիրոյի, Յելվեցիուսի նման նաև մյուս ֆրանսիացի լուսավորիչներ-համրագիտակները Մարի Վոլտեր /1694-1778/, Ժուլիեն Լամետրի /1709-1751/, Ռուս/ առանձին է հետո/, Դ. Ալամբեր /1717-1783/, Պոլ Յոլքախ /1723-1789/... և ունեին նույն /անկասկած որոշ վերապահումներով/ մոտեցում - մտածելակերպը... գործիչներ, որոնք զաղափարացնեն նախա-պատրաստեցին ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը և դարձան հեղափոխական գործիչների /Մարտի, Ռոբեսպիերի... և հեղաշրջող Նապոլեոնի/ հեռակա ուսուցիչները, դաստիարակները: «Անա թե ովքեր /Կոլտեր, Ռուս.../ կործանեցին միապետությունը» /Լյուդովիկոս XVI/:

«Եթե ժամանակին կախեին Վոլտերին և Ռուսոյին, Ֆրանսիայում հեղափոխություն չէր լինի» /Վ.Ջուլգո/:

Ֆրանսիացի Լուսավորիչները անձի ձևավորման գործուների մեջ ընդգծված կարորում էին նաև հասարակական, իսկ Ռուսոն նաև բնական միջավայրի դերը:

ԺԱՄ ԺԱԿ ՊՈԽՈ /1712-1778/: Ծնվել է ժննում, ծանր, դառը մանկություն, համեստ կրություն, զգայում, ինքնամփոփ բնավորություն /մազղիզմի տարրեր/: 16 տարեկանից շրջագայել է... կատարել տարրեր աշխատանքներ-ծառա, սպասավոր, տնային քարտուղար, երաժշտության ուսուցիչ, նոտաներ արտագրող, գրագիր... թափառումները նրա դպրոց-հանալսարաններն էին, բնությունը դաստիարակն. ամեն ինչի հասել է հիմնականում ինքնակրթությամբ:

1741 թ. Փարիզում. աստիճանաբար նշերմանում է ֆրանսիացի լուսավորիչների հետ: 1743-44 թթ. Ֆրանսիական դեսպանության քարտուղար Վենետիկում:

1749 թ. շրջադարձային էր: Դիմոնի ակադեմիայի մրցույթը հետևյալ թեմայով «Գիտությունների և արվեստների վերածնունդը նպաստել է, արդյոք բարքերի բարելավմանը»: Ուստոն ներկայացնում է աշխատանք «Ուսուղություն գիտությունների և արվեստի մասին» բացասական հիմնավորումով առաջընթաց-վերածնունդը չեն նպաստում բարելավմանը /արգելակում են /: Բազմաթիվ, բազմաժանր գործերի հեղինակ է. «Զուլիա կամ նոր Յելիզ» /1761/, «Յասարակական դաշինք» /1762/ մերժում է մասնավոր սեփականությունը, «Ուվանանք» /1767-68/, «Ուսուղություններ մարդկանց միջև անհավասարության մասին» /1754-55/ և այլն...»

Անդրադառնանք «Եմիլ կամ դաստիարակության մասին» /1762/ գրքին: Գիրք որ հոչակ բերեց նրան... և հալածանքներ... Եկեղեցու նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար /չորրորդ գիրքը/: «Եմիլ» լուս տեսավ և անմիջապես Փարիզում խարուվկի հանվեց /11.7.1762 թ./, մեկ շաբաթ անց ժննում, ապա Բենում... իսկ Շվեյցարիայի Մոնտե - Տրավեր /գյուղակում անգամ քարկոծել են Ռուսոյին, և հաճախ նա քողարկված հայկական տարագով էր շրջում-զբոսնում: Այդ օրերին Ֆրանսիայի պառլամենտականները բացահայտ հայտարարում էին, որ «Եմիլը» այրելով ոչնչի չեն հասնի, պետք է խարուվկի մատնել հեղինակին. 1762 թ. հունիսի 9-ին պառլամենտը դատապարտում /և արգելում/ է «Եմիլը»: «Միշտ երազող» և հետապնդումից զգուշացող հեղինակը փախավ Անգլիա: Եկեղեցին և պառլամենտը միայն ավելի

¹ Տերտուլիանոս /150/60-222/. «Բաղաբակրությունը փշացնում է մարդուն»: Դժվար է համաձայնել այս և Ռուսոյի մտքին, իսկ «Ավետարանը ոչնչացրեց գիտության անդրաժշտությունը» թվում է վերապահումով պետք է մոտենալ:

քան իինգ տարի անց ներեցին հեղինակին, վերադարձավ Փարիզ /1767 թ-ին/ և այն համարձակ-խիզախը չեր, ինչ նինչ «Եմիլը»:

Դաստիարակությունը ըստ Ռուսոյի «Եմիլ կամ դաստիարակության մասին»: Գիրքը Երկու նասից, առաջինը /չորս գիրք/ Եմիլի /տղա/, երկրորդը /ինքնգերորդը/ Սոֆիի /աղջիկ/ դաստիարակության, զարգացման նկարագիրն է: /Տես աղյուսակ 4/:

Բնական իրավունք, բնական օրգագում- դաստիարակություն: Բնահարմարություն և ազատ դաստիարակություն, բայց ոչ կամակորության դրսկումներ, միաժամանակ, թեկուզ աննկատ, բայց դաստիարակի աչքը «միշտ վրան», բացարձակ ազատություն չկա, դաստիարակությունը և պարտադրություն ունի: Զգալի բնապաշտություն /մերձեցու Բուրդիզմին/ . Ներդաշնակություն ամեն ինչում: «ճանաչեցեք Երեխային» և նրան ուղեկցեք «Սալոնից դեպի բնություն». Եմիլը բնության զավակն է: Վերապահումով նշենք, որ նկատելի է որոշ աղերս Երեխա-կենտրոն /պեղոցնենտրիզմ/ դաստիարակության հետ:

Մի փոքր շեղում. դաստիարակության հարցում ազատամտությունը, բնահարմարությունը նորություն չեն, դրանք իրենց արժանավոր տեղն ունեցել են հնագույն ժամանակներից: Երկու խոսք Ռուսոյի մոտ նախորդներից մեկի՝ արքեպիսկոպոս, ակադեմիայի անդամ Ֆրանսուա Ֆենելոնի /1651-1715/ մասին. սա իր «Ուիլիսի որդի Տելեմաքի արկածները» /1699/, «Սեյյալների Երկխոսություննը» /1700.../ և, ընդգծենք, «Աղջիկների դաստիարակության մասին» /1687/ գրքերում նեկնարանում է ազատամիտ զաղափարներ, բայց զարմանալիորեն դեմ էր աղջիկներին երգ, պար, այլ նրագեղ արվեստներ ուսուցանել... միայն քրիստոնեական- Եկեղեցիական երաժշտություն... խոսում է բնահարմար դաստիարակության / հատկապես կանանց/ մասին և գովերգում «Կյանքը բնության գրկում»... որոշ դրույթ-նոտեցումներով Ռուսոն կարծեք «ընդօրինակում է» Ֆենելոնին:

«Ֆրանսիացի Համելես» Բայան/

«Ռոմանտիզմի հայր» Ռուսոյի մոտ ամեն ինչ տեսական մտքի արդյունք է, այդ պատճառով էլ և «Եմիլը» /գիրքը/ և Եմիլը, և Սոֆին սիսեմա են, իրականությունից հեռու, խրտվիլակ, հեղինակի Երևակայության ծնունդ. «Ես որոշեցի ինձ համար մի Երևակայական սան վերցնել»... «Ես նրան չեմ դաստիարակում, այլ պատրաստում էի դաստիարակվելու» /մինչև 15 տարեկանը/: Ռուսոն իր կյանքում ոչ մի կրթադաստիարակչական հաստատությունը չի աշխատել, ոչ մի Երեխա չի խնամել, սնել, մեծացրել, դաստիարակել.. նույնիսկ իր իինգ զավակներին, «որոնց ես երբեք չեմ տեսել» /իր խոսքերը, տվել է դաստիարակչական տուն... որպես արդարացման պատճառ ընդունելով այն,

Հկարծում ենք ոչ ներելի/, որ իր կինը անկիրթ է, անդաստիարակ և երեխաների համար տանն «ավելի վաստ կլիներ»:

Չնայած այդ ամենին Ուուսոն այն գործիչն է, որը շնորհիվ բնական-ազատ-անկաշկանդ, դաստիարակության, սիրո, հոգատարության երեխայի նկատմամբ /թեկուց գորային/, մեծ ազդեցություն է բողել հետագա մանկավարժական /ոչ միայն/ մտքի վրա /Պետալոցցի, Ֆիլանտրոպիստներ, Ֆրյոբել, Աքրովյան... և շատ-շատեր/:

Մեծություններ են գնահատել նրան. «Ուուսոյի «Եմիլը» նվաճել էր ողջ քաղաքակիրթ աշխարհը» /Վ. Գյորե/, «Օ, Ուուսոն, ինչո՞ւ եք ապրել միայն 66 տարի, ճշմարտության համար դուք հավերժ պետք է ապրեիք» /Նապոլեոն/, Նապոլեոնը պաշտելով Ուուսոյին, ատում էր Կոլտերին, վախենում յակորինյաններից /Ստենդալ/, «խելացի մարդը... միշտ էլ որկիցե կողմից Վոլտերի ու Ուուսոյի հորեղբոր տղան է» /Ստենդալ/:

Իր ժամանակ և հետո էլ եղել են նրան մերժողներ, ոչ բարյացակամ, երթեմն չարակամ քննադատներ, ոմն Տրոնշեն Ուուսոյի դեմ «Նամակներ հարթավայրից» պարսավագիր է հրապարակում /1763/. Ուուսոն պատասխանում է՝ «Նամակներ լեռնից». մեկ տարի անց նորից պախարակող անանուն գրքույկ «Քաղաքացիների կարծիքը»... Շառլ Պոլիսոյի /1730-1814/. «Փիլիսոփաներ» կատակերգությունը գրված է ֆրանսիացի հանրագիտակաների, մասնավորապես Ուուսոյի դեմ... «Մանկավարժությանը Ուուսոն ոչինչ չի տվել» /Ժյուլ Լեմետր, 1853-1914/ ֆրանսիացի գրող՝ քննադատ/... «Ես ասում եմ Ուուսոյին» /Ֆ. Նիշշեն/...

Եվ նոյից նշենք, Ուուսոն մեծագույն մանկավարժ է, նա այդ բնագավառի դասականներից է, իր հաստատուն, կայուն տեղն ունի մանկավարժության տեսության ու պատմության խոշորագույն գործիչների շարքում, եզրափակենք իր հսկ խորերով... «Ես ստեղծվել եմ կյանքի համար, ահա մահանում եմ չճանաչելով այն»... «Հինձ հանգիստ թողեք, ոչ պատվեք, ոչ ստորացրեք»...

ԴՊՐՈՑԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Եղան հեղափոխական նախաձեռնություններ խարսխված ժողովրդական սկզբունքների վրա: Մշակվեցին նախագծեր...

Ժառը Մորիս Թայերացի /1754-1838 / նախագիծը:

Պետական-միասնական քառաստիճան դպրոց, հրավահավասար, պարտադիր, անվճար ուսուցում, ուելականին մոտ համակողմանի ուղղվածությամբ, երկու սերի միատեղ ուսուցում, բացառել կրոնի անցումը:

Լուի Միշել Լեպեյետիկ /1760-1793/. Յակոբինյան ընդգծված դեմոկրատական ուղղվածությամբ, նույն սկզբունքները, ինչ թալեյրանի ծոտ, որպես լրացում օգնել կարիքավորներին, հոգատարություն ու խնամք 5-12 տարեկան նախանքների համար պետության հովանավորության ներքո ունենալ «ազգային դաստիարակության տներ»:

Անտուան Լորան Լավուազիէ /1743-1794/. Զգալի է Լոկի ազդեցությունը, փաստորեն նույնաբնույթ առաջադիմականն նախագիծ:

* * *

1793 թ. Կոնվենտը որոշեց աստիճանաբար իրագործել նշված բարեփոխումները, իսկ պարտադիր անվճար տարրական ուսուցումը մտցնել և իրագործել անմիջապես:

Սակայն Տերմիդորի 9-ից /27.7.1794/... ամեն ինչ անտեսվեց. հակահարձակում. բռնություններ, գելիուտին... հապճեպ վերացվեցին նոր ծլարձակող բարեփոխումները... Անան իրավիճակում /Վերելքի նախանշում/ և նահանջ/՝, արժե մեջբերել Ֆ. Նիշշենի Գյորեին բնորոշող խոսքերը՝ «Նապոլեոնի ելույթի ժամանակ Գյորեի սիրտը բացվեց, «ազատության պատերազմների » ժամանակ այն փակվեց»:

ԱՐԵՎՄՏԱ-ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

1800-1871 թ.

Ամբողջ մշակույթի վերընթաց շարժման ժամանակաշրջան: Զգալի տեղաշարժ, աշխուժացում լուսավորության, դպրոցի բնագավառում, ֆրանսիական հեղափոխության տարիներին մշակված նախագծերի որոշ դրույթների աստիճանական իրականացում, պետության դերի ուժեղացում, տարրական դպրոցի արտակարգ ընդլայնում, որոշակի հեռացում եկեղեցուց-հոգևորից:

ՖՐՈՒՍԻԱ. Նապոլեոնը ավելի կենտրոնացնում է դպրոցը, պետական առանձքային է դառնում. որոշակի ինքնավարություն: Լիցեյ, քոլեջ / ավելի բարձր /... և դասական և ռեալական... ուղղվածությամբ:

Ընդլայնվում է դպրոցական ցանցը. ել ավելի ընդգծվում ուսուցչի դերը կրթա-դաստիարակչական աշխատանքներում... բայց եղել են և գործիչներ /Ժան Ժոզեֆ Ժակուտա-1770-1840 թթ./, որ ժխտելով ուսուցչի դեկապար կարող են աշխակերտի ինքնուրույն աշխատանքը... ոչ մի մանկավարժ վերջին մտքին առարկել չէր կարող... բայց «անհարգալից» վերաբերմունք ուսուցչին, նսեմացնել նրա դերը, կարծում ենք անմտություն է: Ետնապոլեոնյան տարիներին եկեղեցու որոշ աշխուժացում, բայց ոչ երկար... 1848 թ. հետո՝ նորից և էլի կարճատև: Դա կյանքի թելադրանքն էր:

Մարմնական պատմմերը ֆրանսիական /և ոչ միայն/ դպրոցում կիրառելի էին. դրանք արգելվում են Լուի Ֆիլիպի /1830-48 թթ./ հրամանով, երբ Մազարինի օրենքում տառապանք-տանջանքներին այլևս չոհնանալով, աշակերտը գրավանի դանակով ուղղակի մորթում է իր տանջարարին:

ԱՆԳԼԻԱ

Տարրական դպրոցը լայն տարածում ստացավ, միջնակարգը բավարար զարգացում ապրեց. մեծ մասով մասնավոր-ռեալական, բայց ավելի դասական, լավ հինքերի վրա էր ֆիզիկական դաստիա-րակությունը:

1819 թ. Օուենի նախագծով օրենք ընդունվեց մանկական /անչափահաների/ աշխատանքի մասին, ուր անտեսված չէին նաև ուսուցման /դպրոցական/ հարցերը: 1870 թ. օրենք տարրական ուսուցման

¹ Պյուեն «Իմ կյանքից» հուշերում գրում է «ուսուցչները մեզ հետ վարվում էին շատ դաժան, անտեղի ծոծում ու բնացքահարում էին... արգելված էր խույս տալը կամ դիմադրելը»:

մասին. առաջադիմական... կարիքավորների համար անվճար: Եկեղեցու /բողոքական / դերը բավականին զգալի էր: Չարտիստների առաջա-դիմական պահանջները:

ԲԵԼԼԸ /1753-1832, հոգևորական / Լանկաստերը /1778-1838 / միմյանցից անկախ մշակեցին / դարավերջ-դարասկիզբ / փոխադարձ ուսուցման համակարգը, առաջավորները / մոնիթոր / -ավագները ուսուցանում էին կրտսերներին / տարրական դասարան: Որոշ կիրառում ունեցավ նաև Յնդկաստանում, Ֆրանսիայում, Ռուսաստանում և այլուր... բայց կարծ կյանք ունեցավ... Բելլը, որպես հոգևորական դրան տվեց կրոնական ուղղվածություն փոխառելով հնդիկներից- բուդիզմ:

ԳԵՐՄԱՆԻԱ. Որոշ հետամնացություն, նկատելի պահպանողականություն: Իշխում էր Sturm und drang - փոքրիկ ու գրոհ- ոգին: 1839 թ. օրենք «Երեխաների աշխատանքի պաշտպանության մասին» ուր նշված էին նաև ուսուցման հարցեր:

Դպրոցական ցանցի, նախապես տարրական, ապա և միջնակարգ, արտակարգ ընդլայնում, կրոնը ուժեղ, նույնիսկ առաջատար... Լուսավորության բնագավառը վերափոխող առաջադիմական մտքեր էին քարոզում և գտնում իրականացնել Կանտը, Ֆիլիպտեն և ուրիշներ...

Բանասեր, փիլիսոփա, լեզվաբան, պետական գործիչ Վիլհելմ Յունգը /1767-1835/ 1809 թ. Բեռլինի համալսարանի հիմնադիրը, որի անունով էլ կոչվում է այն. եղել է լուսավորության դեպարտամենտի դիրեկտոր. ծերնարկել և իրագործել է զգալի բարեփոխումներ /հաճախ հանդիպելով դիմադրության/- տարրական դպրոց հանել եկեղեցու իրավասությունից / աշխարհականացնել/, կիրառել Պեստալոցցի մերոդ սկզբունքները. զարկ տալ կրթական հաստատություններին, և այլ լուսավորական հիմնարկների տարածմանը: Այդ անենում նրան աջակցել է բնախույզ, աշխարհագրագետ, ճանապարհորդ կրտսեր Եղայոց Ալեքսանդրը /1769-1859/:

ՖԻԼԱՆՏՐՈՊԻՍՏՆԵՐԸ

Մարդասիրություն. /Phileo + antropos. Սիրում եմ + մարդ/. Մարդասիրություն, /Բարեկարգություն, օգնություն կարիքավորներին/: Շարժումը սկզբնավորվեց Գերմանիայում 1770-ական թվականներից և լայն տարածում ստացավ 19-րդ դարում: Նպատակադրությը արթնացնել գերմանական կյանքը /որոշակիորեն զիջում էր Ֆրանսիային, Անգլիային/, զարկ տալ մշակույթին, տեղաշարժել կրթա-դպրոցական համակարգը և այդ ամենը բնահարմարության ակզբունքով, սերտ կապ բնության հետ, որոշ չափով զգալի էր Ուսույն ոգին:

ԲԱՁԵՂՈՎ ՅՈՂԱՍ ԲԵՌՆԵՐԴ / 1724-1790/.

Զգտում էր լուսավորության բնագավառում բարեփոխում - վերափոխումների: Դրանց իրագործման համար «Յարուստները պետք է լայն բացեն իրենց քսակը», որպեսզի հնարավորություն լինի գործելու «ընդարձակ դաշտում» ... այնպես, որ « մարդկությունը կարողանա... օգտվել... բարիչներից: Եվ նա դեպի այդ նպատակն էր շտապում ոչնչի առաջ կանգ չառնելով» /Գյորե/: Եվ ահա 1768 թ. մամուլում իրապարակում է «դիմում մարդկության բարեկամներին և ումենոր մարդկանց» կոչ-նամակը, ուր քննադատում է գերմանական դպրոցը և հայում օգնություն, որն աջակցություն կլինի իր ապագա գործունեությանը: Ապա հրատարակում է «Տարրական գործեր պատաճիների և ուսուցիչների համար». հետագայում վերամշակեց, հարստացրեց և վերահրատարակեց 1774 թ. «Տարրական աշխատություն» խորագրով¹: Նույն թվականին Դեսպոտ քաղաքում, իր կալվածքում, իր շենքով, իր դրամով բացում է «Դաստիարակչական հաստատություն» - Ֆիլանտրոպիկինը. «մարդասիրություն և բարի բարքերի դպրոց». հիմնականում գիշերօթիկ, աշխարհաքաղաքացիական որոշակի հակումներով, որոշ դասայնություն, կրոնայնություն... պահանջելու, բայց «նուրբ» կարգապահություն, անգամ ենթարկում. համազգեստ խուզված գլուխ... վճարովի հարուստների համար, աղքատները-բարեգործությամբ: Տարբեր տարիների սովորել են 13...53... և ավելի աշակերտներ: Ընդունված սկզբունքն էր՝ առաջինություն և ընդհանուր բարիք:

Սովորողները բաժանվում էին երեք խմբի /կարգ/. որոշ չափով զգացվում էր դասայնությունը /«Վերիններ» / և մյուսներ/, բայց չէր անտեսվում և ընդունակությունները:

ա/ Ակադեմիականների, ապագա դեկանար, պատաժանատու, գիտական աշխատողներ...

թ/ Պեղագոգիստների, ապագա ուսուցիչներ, տնային դաստիարակներ...

զ/ Ֆամուլյանտների. ապագա սպասավորներ: /թատուս - սպասավոր, ծառա, գրահակիր.../:

Ըստ խմբերի /կարգ/ և տարիքի /ուսման աստիճան/ անցնում էին տարբեր առարկաներ:

Ընդհանուր պատկերը. լեզուներ /գերմաններեն, ֆրանսերեն, լատիններեն, հունարեն/, փիլիսոփայություն, բարոյագիտություն, մաթեմատիկական, բնագիտական առարկաներ, աշխարհագրություն,

¹ Բազենովի այս գրքի մասին Գյորեն գրել է «Տարրական աշխատություն» գուրք երայն... առավելություններից, որոնք մենք տեսնում ենք Ամոս Կոմենիոսի նույնօրինակ աշխատություններում»:

պատմություն, երա-ժշտություն, արհեստներ, գյուղատնտեսական աշխատանքներ, ֆիզիկական դաստիարակություն - վարժություններ, խաղեր, զբոսանք, էքսկուրսիա, ծիավարություն...

Ավարտելուց հետո ուսումը շարունակել համալսարանում:

Ուսուցիչները ազատորեն օգտվում էին իրնեց մերոդ-սկզբունքներով, հաճախ դեկավարվելով սեփական պլան ծրագրերով...

Հետագայում ևս ննան հաստատություններ կազմակերպվեցին մեծ ճանաչում ստացավ ԶՎԼՑՄԱՆ /1744-1811/ 1784-ին Շնեպֆեն-տալում բացված ֆիլանտրոպիկինը. առարկայական ավելի լայն ընդգրկումով... նաև անգլերեն, իտալերեն, հնագիտություն, հաշվապահություն... նպատակը պատրաստել համալսարանի, զինվորական ծառայության, առևտորական գործունեության համար: Ֆիլանտրոպիկինը հետագայում դարձան- վերանվանվեցին «անտառային դպրոցների»:

Գերմանացի կալվածատեր էրերիարդ Ռոխով /1734-1805/. քարեգործ, ճորտ, աղքատ երեխաների համար կազմակերպում էր դպրոցներ, հիվանավորում: Կազմել է դասագիրք «Երեխաների բարեկամը կամ ընթերցանության առաջին դասերը»:

Ծվեցարացի մանկավարժ Կարլ Սալիս /1728-1800/. իիմնում է ֆիլանտրոպիկ-ցուցադարական դպրոց /հետագայում գլխավորել է Բագերովը/:

Ֆիլանտրոպիստները փաստորեն հիմնադիրներն են.

- Դպրոցական մարմանամարզության. Գուտս-Սոլտս /1750-1830/ հեղինակ՝ «Մարմնամարզություն երիտասարդության համար» /1793/, «Խաղեր պատաճնեկության համար» /1796/:

- Աշխարհիկ ուսուցման – կրթության. Բլաշե:

- Մանկական գրականության. Կամպե. « Հոգեկան ուսումն մանուկների համար». Յամբուրգ, 1780 թ.:

- Մանկավարժական կրթության. Տրապայ.

Այսպիսով նրանք մեծ ազդեցություն են գործել 19-րդ դարի «Նոր դաստիարակության» նոր դպրոցի վրա :

ՊԵՍԱՍԱԼՑՅԻ ՅՈՂԱՍ ԴԱՅՆԻՒ /1746-1827/. Ծնվել է Ցյուրիխում, բժշկի ընտանիքում. ստացել լավ կրթություն, ամբողջ կյանքում դեկավարվել ժողովրդական - դեմոկրատական սկզբունքներով, որոշ ուսուպիստական մտածելակերպ /նկատելի է «Լինհարդ և Յերտրուտ» գրքում/:

1768 թ-ին ծեռք է բերում հողակտոր - « Neu hof » նոր բակ- նպատակը կազմակերպել « նոր տնտեսություն»... հնարավորությունների սահմաններում աշխատանքի, կրթության միջոցով բարելավել ժողովու-

ոի գոյատևման միջոցները: Եվ ահա, 1774 թ-ին հիմնում է դպրոց- որբանոց, 1775 թ. ոհմում է «Մարդկության բարերարներին» օգնելու հրագործելու իր նախատեսումները. «Զեր ամեն մի դրամական զոհոդուրյունը մի որբուկի, ապագա ընտանիքի հիմքն է լինելու»: Դպրոցորբանոցը գործում է մինչև 1780 թ. /միջոցները չեն բավարարում/ անցնում էին գրել, կարդալ, հաշիվ... արհեստներ, գյուղատնտեսական - գործնական գիտելիքներ.... ուսուցում, շաղկապված աշխատանքի հետ:

1780 թ. «Մենակյացի երեկոյան ժամերը», առաջին մանկավարժական այս աշխատանքում Պետալոցին առաջդիմական, ժողովրդական սկզբունքներով արժարծում է դպրոցի, կրթության, ուսուցման, դաստիարակության հարցեր, գգացնել է տալիս նախորդների տեսությունների իմացումը - գնահատումը, բայց միանգամայն յուրովի, ավելի ժողովրդավարական հմատավորմամբ:

1781 թ-ին «Լինհարդ և Յերտորուդ» գեղարվեստա-մանկավարժական գիրքը /հայերեն 1897 թ./, գյուղի /Բենալի/ նկարագիրը, կառավարիչը անգործումյա - բռնակալ կալվածատերը փոխում է կառավարիչին... նոր «դրախտային վայրը» է դարձում այն... ակումբ, գրադարան, արհեստա-նոցներ... դպրոցը վերակենդանանում է, տեսական- գործնական լավ գիտելիքներ, արհեստ, մանածագործություն, գյուղ աշխատանքներ, ցանել-մշակել. նաև տեսական գիտելիքներ, գրել, կարդալ, հաշիվ...

1798 թ-ից Ստանցում... նույն նոյինոյֆոն սկզբունքներով...

1801 թ-ից Բուրգֆորոյում, ուսուցչություն ... նույն ձևով:

1801 թ-ին - «Ինչպես է Յերտորուդն ուսուցանում իր երեխաներին»

տարօրինակ մոտեցում. երեխան աշխատում է դազգահի վրա, միաժամանակ կարդում-գրում-սովորում... մերժելի մեթոդ. անգամ Ֆիխտեն հակամանկավարժական է համարում այս մոտեցումը, խոսք անմիջական, միաժամանակյա կիրառման մասին է և ոչ ընդհանրապես աշխատանքային ուսուցման:

